

Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ԽՕՍՔԸ

Հայաստանի անկախության 20 ամեայ յոբելիարին առթիվ, ՍԴ Հնչակեան կուսակցության կեդրոնական վարչությունը կը շնորհավորէ Հայ ժողովուրդը՝ Հայրենիքի, Ղարաբաղի, ԲԷ Սփիւռքի տարածքին: Կար ժամանակ երբ անկախության գաղափարը իր ծրագրին մէջ առաջինը բանաձեւած եւ որպէս այդպիսին երկար տարիներ հայ իրականության մէջ, միակը հանդիսացող Ս.Դ. Հնչակեան Կուսակցությունը կ'ամբաստանուէր «ցնորատեսութեան» եւ երեսկայական գաղափարներ հետապնդելու մէջ: Ահա այսօր, անկախությունը 20 տարիներ կտրած իրականութիւն է արմատացած կենսակերպ:

Այս առթիւ առաջին հերթին կը շնորհաւորենք անկախության պայքարի թոհուրոհին մէջ ծնած ու ձեւաւորուած հայկական բանակը՝ անկախությունն ու անկախութեան նուամները արտաքին թշնամիներին պաշտպանելու միակ երաշ-

Շաբ.ը էջ 5

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 20-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԶՕՐԱՀԱՆԴԵՍ

Սեպտեմբեր 21-ի առաւօտեան Երեւանի Հանրապետութեան հրապարակին վրայ տեղի ունեցաւ Հայաստանի Անկախութեան 20-ամեակին նուիրուած տօնական զօրահանդէսը, որու ընթացքին ցուցադրուեցան հայկական զինուած ուժերու ռազմաարդիւնաբերական նմուշները, տեղական արտադրութեան անօդաչու ինքնաթիռներ, նաեւ օդուժի կարողութիւնները: Զօրահանդէսին ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան եւ Լեւոնային Ղարաբաղի ղեկավարութիւնը, ինչպէս նաեւ Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսները: Նախագահ Սերժ Սարգսեան այս առթիւ իր ունեցած ելոյթի ընթացքին յատկապէս ըսաւ. «Ովքեր 90-ականների սկզբներին չեն եղել Հայաստանում եւ դիտում են վաւերազրական կադրեր, պարզապէս չեն հաւատում, որ դա եղել է, նոյնիսկ Երեւանի փողոցների կողմերը կարծես ուրիշ աշխարհից լինեն, էլ չեմ խօսում Հայաստանի սահմանների, հրետակոծող մեր քաղաքների ու Արցախի մասին»: Շարունակելով իր խօսքը Սարգսեան ըսաւ. - «Այսօր Հայաստանը, իր բոլոր խնդիրներով հանդերձ, կայացած երկիր է:



Հայաստանի բարձրաստիճան անձնաւորութիւնները կը դիտեն անկախութեան 20-ամեակին նուիրուած զօրահանդէսը

Վկայ՝ այսօրուայ զօրահանդէսը: Իսկ ամենաթանկը, որ ունենք, անկախութեան սերունդն է: Սերունդ, որ ազատ երկրի քաղաքացի է եւ իրեն չի պատկերացնում այլ կարգավիճակում: Երկու տասնամեակում մեզ յաջողուեց հսկայական թուիչք արձանագրել, բայց շատ բան դեռ չենք հասցրել անել:

Ե՛ւ ձեռքբերումները, եւ՛ բացթողումները մերն են»: Սերժ Սարգսեան «կեցցէ»-ներ ուղղեց Հայաստանի ժողովրդին, ազատ Արցախին, հայ կամաւորներուն, հայոց յաղթական բանակին, շինարարներուն եւ սփիւռքին:

Շաբ.ը էջ 5

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ՍՓԻՒՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՂԵԿԱԿԱՐՆԵՐՈՒ ՀԱՄԱԺՈՂՈՎ



Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա., Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. եւ նախագահ Սերժ Սարգսեան Համաժողովի բացման ընթացքին

Սեպտեմբեր 19-ին Երեւանի Կարէն Դեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրին ներս տեղի ունեցաւ բացումը՝ Սփիւռքի կազմակերպութիւններու ղեկավարներու եւ ներկայացուցիչներու Համահայկական Համաժողովին, որուն կը մասնակցէին աւելի քան 500 հոգիներ՝ 53 երկիրներու հայ համայնքներէն: Համաժողովի բացումը կատարեց նախագահ Սերժ Սարգսեան յայտնելով, որ Համաժողովը «10 միլիոն հայերու զօրութեան խոր- Շաբ.ը էջ 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 20-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԸ ՆՇՈՒԵՑԱՒ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԽԱՆԴԱԿԱՌՈՒԹԵԱՄ



Կիրակի, Սեպտեմբեր 18ին, 2011, Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը իր տարիներու աւանդութիւնը շարունակելով, համաժողովրդային փառատօնով մը նշեց մեր փառապանծ հայրենիքի նորանկախ Հանրապետութեան 20րդ տարեդարձը: ՆՍՄՄ-ի կազմակերպած փառատօնին առիթով Կլենտէյլի «Վերտուկ» հանրաժանութի գրասրահին զգեցած էր տօնական տեսք եւ դարձած հարաւային Գալիֆորնի- իոյ տարբեր շրջաններէն ժամանած հազարաւոր հայերու հանդիպման վայրը: Արդարեւ, այս տարեդարձը միանգամայն ճակատագրական հանգրուանի մը առջեւ կը դնէր մեր հայրենիքը: Քանի որ խիստ աննպաստ զարգացումներու դիմաց էր մեր երկիրը, (հայ թրքական յարաբերութիւններ արտագաղթ, անգործութիւն, եւայլն): Հայ Շաբ.ը էջ 8

ՈՐՏԵՂ Է ՍԱՐԳՍԵԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

ՅԱԿՈԲԱՂԱԼԵԱՆ

«Օրինաց Երկրին» ըստ երեւոյթին խոստացել են տեղեր նոր խորհրդարանում: Դրա համար էլ երեւի թէ կուսակցութեան տարբեր պաշտօնեաներ հրապարակաւ յայտարարում են, թէ իրենք ընտրութեանը մասնակցելու են առանձին, որովհետեւ իրենց վարկանիշն աճում է:

Օրինակ, կուսակցութեան փոխնախագահը յայտարարել է նոյնիսկ, որ ՕԵԿ են վերադառնում նրանք, ովքեր նեղացել էին կուսակցութեանից: Թէ ովքեր էին նեղացել ու ովքեր էին վերադառնում՝ Բիշարեանը կ'իմանայ, իսկ հանրութիւնը գիտէ, որ ՕԵԿ անդամ են դարձել օրինակ Խոսրով Էդոն, Լաւանդայի Արայիկը:

Այդ մարդիկ, որ հանդիսանում են Հայաստանի իշխող համակարգի եւ բարձր կարկառուն հետեւորդներ, հազիւ թէ մտնէին մի կուսակցութիւն, որին իշխանական ճամբարում կամ տնտեսական քուտոսներում ոչինչ չի շողջողում: Աւելին, նրանք կը մտնէին միայն գործուն երաշխիքներ ստանալու դէպքում: Այլապէս է դուրսը Մաղաթեանը՝ Խոսրով Էդոն իր իրականութեամբ ՕԵԿ մեծ շնորհակցանքով համար:

Միւս կողմից, երեւի թէ պէտք չէ համոզուած լինել, որ այդ մարդիկ հենց ՕԵԿ համար են փող ծախսում: Նրանք նախ ծախսում են իրենց համար, յետոյ երեւի թէ ընդհանուր իշխանութեան, որի համար էլ պէտք է աշխատի ՕԵԿ-ը: Օրինաց երկրին հազիւ թէ հենց այնպէս տեղ խոստանան խորհրդարանում: Կուսակցութիւնը պէտք է տքնի ընտրութեանը թէ իր, թէ «օբյեկտի» յաջողութեան՝ անհրա-

ժեշտ արդիւնքի համար, եւ եթէ հարկ լինի, պէտք է վրձինը ձեռքին նկարի այդ արդիւնքի իր բաժինը: Առաջիկա ընտրութեանն ՕԵԿ հիմնական գործառույթը թերեւս լինելու է դա՛ մի կողմից ակտիւօրէն զբաղուել իշխանութեան նկարը նկարելով, միւս կողմից ակտիւօրէն փորձել խզեցել ընդդիմութեան նկարի վրայ: Դրա համար էլ կուսակցութիւնը վերջին շրջանում համալրուեց մարդկանցով, ովքեր, եթէ արդարացի լինենք, աւելի մեծ՝ ՀՀԿ տրամաչափին էին համապատասխանում:

Բայց, ՀՀԿ-ում ներկայում թէ տեղ չկայ՝ նեղուածք է թէ ֆիզիկական, թէ հոգեբանական իմաստով, թէ նաեւ մարտավարական տեսանկիւնից կարեւոր է թուանկար ստանալու ՀՀԿ գործառույթը ցրել՝ բաժանել գոնէ նաեւ ՕԵԿ վրայ: Այսինքն, այն մարդիկ, ում տրամաչափը ՀՀԿ-ական է, բայց ճակատին ժամանակաորակա ՕԵԿ գրուեց, ըստ ամենայնի այդ ճակատագրով աշխատելու են ՀՀԿ նախընտրական ճակատագիրը կերտելու համար: Իսկ նրանց պլացդարմ հանդիսանալու համար էլ երեւի թէ Օրինաց երկրին տեղ են խոստացել խորհրդարանում, որպէս պարզեւտրում:

Բայց, շատ հետաքրքիր կը լինի, եթէ ՕԵԿ-ի հանդէպ խոստումը Սերժ Սարգսեանը չկատարի: Աւելին, թող տարօրինակ չհնչի, բայց հանրութեան մեծամասնութիւնը երեւի թէ կ'ողջունի Սերժ Սարգսեանի այդ «խոստմանագրութիւնը», եւ դա կը լինի գուցէ այն եզակի դէպքերից, երբ հասարակութիւնը նրան կարող է դրուատել խոստումը չկատարելու համար:

Ի վերջոյ, միթէ Սերժ Սարգսեանը խորհրդարանի ընտրութիւնից յետոյ ունի ՕԵԿ-ի կարիքը: Հակա-

ռակը՝ Սարգսեանը հանրութեան աջակցութեան կարիք է ունենալու, իսկ ՕԵԿ-ին խորհրդարանից դուրս թողնելու պարագայում հանրութիւնն անկասկած աջակցութեան ինչ որ չափաբաժին, ինչ որ տեսքով, Սարգսեանին անպայման կը մատուցի:

Փոխարէնը, Սարգսեանը դրանով կարող է իսկապէս զգալի ծառայութիւն մատուցել Հայաստանում քաղաքական համակարգի կայացմանը: «Օրինաց երկրը» մի կուսակցութիւն էր, որ 2006 թուականի Մայիսին ստացաւ քաղաքականութեամբ զբաղուելու բացառիկ շանս, դուրս գալով իշխող կողմիցից: Բայց դրա փոխարէն, ՕԵԿ-ը ոչ թէ քաղաքականութիւն մտաւ, այլ գնաց Մարկո-Պոլո սրճարան, ուր Ռոբերդ Քչարեանը բան էր ձայնագրում:

Սրճարանից դուրս գալով, ՕԵԿ-ը նորից մտաւ իշխանութիւն: Մինչդեռ իշխանութիւնը ներկայում պէտք է Սերժ Սարգսեանին, հետեւաբար ՕԵԿ-ը նրան, ըստ էութեան, արդէն պէտք չէ: ՕԵԿ-ն իր դերը կատարեց այն ժամանակ, երբ Սերժ Սարգսեանը չունէր իշխանութիւն եւ նրան այդ իշխանութեան մէջ անհրաժեշտ էին բազմապիսի բալաստներ: Հիմա անհրաժեշտ է ազատուել այդ բալաստներից եւ իշխանութիւն ձեռք բերել:

Իսկ քանի որ Հայաստանը ապրում է արագօրէն փոխուող ու պատկերացումների եւ կառավարման մեթոդաբանութեան գուցէ առեւտրայթ ոչ այնքան, բայց ներքուստ հիմնարար վերանայումներ արձանագրող աշխարհում, իշխանութիւն ձեռք բերելու համար Սերժ Սարգսեանին հարկաւոր է արագ քայլեր կատարել քաղաքական համակարգը առողջացնելու համար: ՕԵԿ-ին խորհրդարանից

դուրս թողնելը կը լինի այդ քայլերից մէկը: Բանն այստեղ կուսակցութիւնը եւ նրա լիդերների անձը չէ, այլ այդ քաղաքական կոչուող ուժի բացարձակ անհամարժէքութիւնը թէ քաղաքականութիւն երեւոյթին, թէ քաղաքական գործընթացներին ընդհանրապէս:

Իսկ քաղաքական համակարգ կարող է կայանալ այն դէպքում, երբ իշխանութիւնը դադարում է այն լցնել քաղաքականութեանն ու առկա գործընթացներին ոչ աղեկվատ սուբիկտներով: Եթէ թւում է, թէ դրանք օգնում են իշխանութիւն պահել, կամ կարող են օգնել, ապա դա մեծ մոլորութիւն է: Կրկնում եմ, աշխարհը փոխում է, եւ այդ փոփոխութիւնների ընթացքը անշրջելի է, ու ոչ աղեկվատ աղմուկ-աղաղակով հնարաւոր չէ խլացնել հասարակութեան պահանջն ու ժամանակի հրամայականը:

Ձի բացառում, որ Սերժ Սարգսեանն այդ ամէնն արդէն իսկ պատկերացրել ու գիտակցել է, ու նաեւ գուցէ այդ պատճառով են ՕԵԿ-ում յայտնուած մարդիկ, որոնք տրամաբանօրէն պէտք է լինէին ՀՀԿ-ում: Դէ պարզ է, որ ՀՀԿ-ից ձերբազատուելը Սերժ Սարգսեանի մօտ արագ չի ստացուելու, հետեւաբար կարելի է ՀՀԿ-ն բաժանել մանր մասերի եւ մաս-մաս ձերբազատուել: Ձէ որ գլխաւոր խնդիրն ի վերջոյ ՕԵԿ-ը չէ, ոչ էլ միւս քաղաքական ժամանակավրէպները: Գլխաւոր խնդիրը քաղաքական համակարգը ՀՀԿ-ից ազատելն է, ու Սարգսեանի իշխանութեան բանալին՝ գոնէ ծուռ-մուռ, գոնէ ժանգոտ բանալին, կարող է լինել միայն այդ խնդրի լուծման մէջ:

«ԼՐԱԳԻՐ»

ՅԱՆՈՒՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՆՈՐ Է ՍԿՄՈՒՄ

ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

Անկախութեան 20-ամեակը մօտենում է, եւ բոլոր այն հանրապետականները, ովքեր ի վիճակի են կապակցուած մտքեր արտայայտել, ժամանակ առ ժամանակ յայտնուած են հեռուստաէկրաններին ու ցուցաբերում իրենց այդ շնորհքը: Մի երկու օր առաջ էլ Ռազմիկ Զոհրաբեանի հերթն էր: Սա, ուրեմն, տարաւ-բերեց ու յայտարարեց, թէ Հայաստանն արդէն 20 տարի է անկախ է, բայց բազմաթիւ պրոբլեմներ կան, որովհետեւ հասարակութիւնը դեռ խորհրդային տարիների հոգեբանութեամբ է առաջնորդուում, դեռ այդ մտածելակերպը չենք թոթափել: Մի խօսքով՝ հասարակութիւնն է մեղաւոր:

Ի դէպ, խորհրդային տարիներին կեանքն իսկապէս այլ էր, մարդկանց հոգեբանութիւնը՝ նոյնպէս: Յիշում էք, չէ՞, ընտրութիւնները ձեւական բնոյթ էին կրում, ցուցակները նախապէս հաստատուած էին կենտրոնում, վերջին հաշուով ամէն ինչ որոշուած էր Մոսկուայում, պետական պաշտօնեաները լայիւր էին պիւտոճէն (դա մի տեսակ «օղից իջած փո» էր համարուում), ուստեղէն կրթութիւնը յարգի էր, մարդիկ խոսքան էին գնում եւ այլն: Ռոբերդ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանն, ի դէպ, խորհրդային նոյնեկլատուրայի միջին օղակներում են «թրծուել» եւ պիտի որ այս ամէնը

լաւ իմանան (ՀՀԿ խորհրդարանական խմբակցութեան կէսից աւելին էլ հաստատ նախկին կոմունիստներ կամ կոմսոմոլներ են): Բայց կարեւորը սա չէ: Հիմա տեսնենք, թէ ինչպիսին է վիճակն այսօրուայ Հայաստանում, եւ ով է դրա համար մեղաւոր: Երեւի արժէ այս հարցին անդրադառնալ կէտ առ կէտ:

Սկսենք ընտրութիւններից: Որեւէ մէկը կասկածո՞ւմ է, որ ՀՀԿ նախընտրական ցուցակը հաստատում է անձամբ Սերժ Սարգսեանը՝ համարեա միանձնեայ: Յիշո՞ւմ էք, մի քանի ամիս առաջ էլ Ռոբերդ Քոչարեանը յայտարարեց, թէ նախորդ ցուցակն էլ իր հետ է համաձայնեցրել (չնայած ինքը ՀՀԿ անդամ չէր): Հիմա սրա համար հասարակութիւնն է մեղաւոր: Հասարակութիւնը լաւ էլ գնում ու կատարում է իր ընտրութիւնը: Այլ հարց է, որ արդիւնքները կեղծուած են, Սերժ Սարգսեանն էլ, առանց անյարմար զգալու, Ռուսաստանի նախագահին պաշտօնապէս շնորհակալութիւն է յայտնում աջակցութեան համար:

Անցնենք պիւտոճէն լայիւրուն: Պետական միջոցները ոչ մէկինը չհամարելու մտայնութիւնն իսկապէս խորհրդային ժամանակներից է պահու, բայց խորհրդային տարիներին չինտոյնիկները գոնէ «լեւրուող» Ռուսաստանի փողերն էին լայիւր, իսկ սրանք սեփական կիսաքաղց ժողովրդից խլուած վերջին կոպէկ-

ներով են իրենց համար հարիւր հազարանոց մեքենաներ առնում կամ ազգուստակով հանգստանում եւրոպաներում: Գուցէ դարձեա՞լ հասարակութիւնն է մեղաւոր: Խորհրդային տարիներին կլիմորուհի դեպուտատները գոնէ ներկայանում էին նիստերին ու ծափ տալիս, իսկ այսօր ՀՀԿ-ում պատգամաւորներ կան, որ տարիներով չեն երեւում, բայց տարեկան 10 հազար տոլար աշխատավարձը լաւ էլ ստանում են:

Անցնենք «խոսանչիներին»: Հասարակութիւնն է մեղաւոր, որ Հայաստանում աշխատատեղեր չկան, վարչապետն էլ յայտարարում է, թէ մեր երկրի տնտեսութեան հիմքերից մէկն էլ դրսից ուղարկուող մասնաւոր տրանսֆերտների հոսքն է: Հասարակութիւնն է մեղաւոր, որ Հայաստանով մեկ արտագաղթի կազմակերպմամբ զբաղուող լեզալ գրասենեակներ են գործում: Կամ գուցէ հասարակութեան «խորհրդային մտածելակերպն» է պատճառը, որ իշխանութիւններն օրէնքը փոխեցին ու վերականգնեցին օտարալեզու դպրոցները: Հասարակութիւնը լաւ էլ դիմադրում էր, բայց «անկախականներ» Ռազմիկ Զոհրաբեանը, Գալուստ Սահակեանն ու միւսները չհամարձակուեցին ծախու հասնել, իսկ հիմա յայտարարում են, թէ բա գիտէ՞ք, ժողովուրդը լիարժէք անկախութեան համար դեռ չի

Շաբ.ը էջ 19

ՄԱՍԻՍ ՏԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
 ԽՄԲԱԳԻՐ՝
 SOPEA. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
 ՍԱՐԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՊԻՒԹԵԱՆ
 ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August
 ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$80.00 (First Class)
 Canada \$120.00 (Air Mail)
 Overseas \$225.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍԱՆ

ՀԱԿ-Ը ԵՐԿԻՍՕՍՈՒԹԻՒՆԸ ԱՅԼԵԻՍ ՉԻ ՀԱՄԱՐՈՒՄ «ԵՐԿԻՐԸ ԱՍԵՂԾՈՒՄԸ ԻՐԱՎԻՃԱԿԻՑ ԴՈՒՐԱ ԲԵՐԵԼՈՒ ԳՈՐԾԻՔ»

Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) համակարգող Լեւոն Զուրաբեանը լրագրողների հետ կապացած հանդիպմանը յայտարարեց, թէ իշխանութեան հետ երկխոսութիւնը այլեւս երկիրը ստեղծուած իրավիճակից դուրս բերելու գործիք չէ:

«Ես կարծում եմ, որ իշխանութեան պահուածքը ցոյց է տալիս, որ բոլոր գիշուումները, որ պատրաստ էին անել, արդէն արել են: Այդ առումով դժուար թէ իշխանութիւնները սթափուեն եւ գնան նոր գիշուումների», - ասաց Զուրաբեանը:

Անդրադառնալով Եւրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԽՎ) Մոնիտորինգի յանձնաժողովի՝ Սեպտեմբերի 8-ին ընդունած բանաձեւի նախագծին, Զուրաբեանն ասաց, թէ այն անընդունելի դրոյթներ է պարունակում, որոնք կոծկում են երկրում ժողովրդավարական իրաւունքների բացակայութիւնը, Մարտի 1-ի սպանութիւնները եւ երկրում առկայ ճգնաժամը:

Յիշեցնելով, որ ԵՆԽՎ Մոնիթորինգի յանձնաժողովի համագերակցողներ Զոն Պրեսկոտի եւ Աքսել Ֆիշերի պատրաստած՝ «Ժողովրդավարական ինստիտուտների գործունէութիւնը Հայաստանում» գեկոյցի նախագծի 11-րդ կէտում ԵՆԽՎ-ին առաջարկուած է յայտարարել, որ վերջին համաներման, 2008 թուականի Մարտի 1-ի սպանութիւնների բացառաւորապէս ուղղուած գործողութիւններն են «նորովի իմաստման, ինչպէս նաեւ ընդդիմութեան ու իշխող կողմից յայտարարուած միջեւ երկխոսութեան

սկզբնաւորման» արդիւնքում, «2008 թուականի մարտեան իրադարձութիւնների էջը կարող է ի վերջոյ փակուած համարուել»:

«Եթէ Մարտի 1-ի էջը փակել կոչ անող բանաձեւն ընդունուի, ԵՆԽՎ-ն ծանր հարուած կը հասցնի սեփական հեղինակութեանը: Աշխարհին, ցաւոք սրտի, ձեռնտու է Հայաստանում ունենալ խոցելի լեզուի մութեամբ մի ուժիւ, որը պատրաստ է կատարել նրա պարտադրանքը դարաբաղեան խնդրում եւ հայ-թուրքական արձանագրութիւնների հաստատման գործում», - ասաց ՀԱԿ համակարգողը՝ յաւելելով. - «Մինչեւ հիմա ոչ միայն չեն յայտնաբերուել 10 զոհերի սպանութեան մեղաւորները, այլ նաեւ իշխանութիւնները ամէն բան արել են ոճրագործութիւնը կոծկելու եւ արդարադատութիւնը խափանելու նպատակով: Նման կեցուածքով ԵՆԽՎ-ն հակասում է անցեալում ընդունուած իր իսկ բանաձեւերին, փաստօրէն՝ խրախուսում նման յանցագործութիւնների կրկնումը»:

Հարցին, թէ Հայաստանի Հանրապետութեան առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը ինչո՞ւ չհամաձայնեց մասնակցել Անկախութեան 20-ամեակին նուիրուած տօնական միջոցառումներին, Զուրաբեանը պատասխանեց, որ եթէ զօրահանդէսն ընդունողը Լեւոն Տէր-Պետրոսեանը լինէր, հաճոյքով կը մասնակցէր:

«Դե, աւագակապետերի հետ ի՞նչ խորհրդանքի կարելի է մասնակցել: Աւագակապետերի հետ կարելի է բանակցել»:

ՌԻԶԱՐԴ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ. «ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 20-ԱՍԵԱԿԻՆ ՄԵՆՔ ՆՇԵԼՈՒ ՔԻՉ ԲԱՆ ՈՒՆԵՆՔ»

Հայաստանի անկախացումից 20 տարի անց մենք նշելու աջնքան էլ շատ բան չունենք: Լրագրողների հետ հանդիպմանը նման յայտարարութիւն է արել Տարածաշրջանային ուսումնասիրութիւնների կենտրոնի նախագահ, վերլուծաբան Ռիչարդ Կիրակոսեանը: Ըստ Կիրակոսեանի, Հայաստանն այսօր ունի արտագաղթ, երկրաշարժի հետեւանքները վերացուած չեն, չունի տնտեսական կայուն համակարգ: «Չնայած որոշակի ձեռքբերումներին, որոնց թոււմ են Լեւոնային Ղարաբաղն ու Ադրբեյջանի դէմ պատերազմում տարած յաղթանակը, բայց մենք երկու բացթողում ունենք՝ մենք չպէտք է հիմնուենք մեր նախկին յաջողութիւնների եւ ուրախութիւնների վրայ, այլ պէտք է հիմնուենք մեր կառավարութեան ու բանակի ներկայ գործունէութեան վրայ», - նշեց Կիրակոսեանը:



Վերլուծաբան Ռիչարդ Կիրակոսեան

պետութեան համար վտանգի՝ չվճարելով հարկերը», - շեշտեց նա:

Կիրակոսեանին նաեւ զարմացուած է Հայաստանի տարածքում ուսակական ուսուցիչների կայունութիւնը: «Հայաստանն աշխարհի այն եզակի երկրներից է, եթէ ոչ միակը, որն իր տարածքում ունի օտար երկրի ուսուցիչական բազա եւ դրա դիմաց ոչ մի դրամ չի ստանում, մինչդեռ Հայաստանին պէտք է վճարեն այդ բազայի համար», - ասաց նա:

Անդրադառնալով անկախութեան տօնին, Ռիչարդ Կիրակոսեանն ասել է, թէ այն պէտք է դարձնել բոլորինը. «Բոլորի տօնը, ոչ թէ միայն նրանցը ովքեր մեծ մեքենաներով եւ թիթիզ համարներով շրջում են քաղաքում»:

«ԲՈՒՆՈՐ ՈՒՐՏՆԵՐՈՒՄ ՈՒՋՈՒՄ ԵՆ ԱԶԱՏՈՒԵԼ ԿՈՒՒՄ ՏՂԵՐՔԻՑ»- ՍԱՍՈՒՆ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

«Սասուն» շոկատի հրամանատար Սասուն Միքայէլեանն Սեպտեմբեր 19-ին լրագրողների հետ հանդիպմանը համաձայնեց այն դիտարկմանը, թէ արցախեան պատերազմում կուռած տղաներն այսօր արհամարհուած, ծանր վիճակում են:



«Սասուն» շոկատի հրամանատար Սասուն Միքայէլեան

«Մարդը, որի մասին վաղը պատմութիւնը կը գրուի, էսօր նուաստացած, արհամարհուած ման ա գալիս», - ասաց նա՝ որպէս օրինակ վկայակոչելով իրեն: «Դուք գիտէք, ես դատուել եմ ոչ թէ իմ քաղաքական հայեացքների համար, այլ չեմ կարողացել իրանց նազ ու տուզը տանել, եւ ես ասել եմ, ես պայքարելու եմ», - ասաց նա: «Էսօր բոլոր ոլորտներում ուզում են պատերազմ անցած տղերքից շուտ ազատուել, որովհետեւ նրանց հնարաւոր չի ջարդել, որ իրանք չէֆ-չէֆ ասեն», - աւելացրեց նա:

«Ես ողջունում եմ երկխոսութիւնը», - Կոնգրես-կողմից երկխոսութեան մասին ասաց Միքայէլեանը՝ աւելացնելով, թէ այսօր Կոնգրեսը ցանկանում է քաղաքակիրթ ձեւով փոփոխութիւն անել, ինչը «լաւ կը լինէր, որ իշխանութիւնները հասկանային»: «Բայց

ես մտածում եմ, որ իշխանութիւնները դա խաղում են այնքան, ինչքան ձեռնտու է... պահի տակ քցելու են», - յայտարարեց նա՝ կարծիք յայտնելով, որ այսօր իշխանութիւնը ժողովրդից անջատուած է:

Հարցին, թէ հնարաւոր է Կոնգրեսն առաջիկայ հանրահաւաքում յայտարարի նստացոյց անելու մասին, Միքայէլեանը պատասխանեց. «Չեմ կարծում, բայց որ սենց գնա, կը յայտարարի»:

«ՉՈՒԱՐԹՆՈՑ» ՕԴԱՆԱԿԱԿԱՅԱՆՈՒՄ ԲԱՅՈՒԵՑ ՈՒՂԵՒՈՐԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՄԱԼԻՐ

Կայացել է «Չուարթնոց» միջազգային օդանաւակայանում ուղեւորային նոր համալիրի բացումը: Նոր համալիրն ունի տարեկան 3.5 միլիոն ուղեւոր սպասարկելու հնարաւորութիւն՝ առանձնացնելով մեկնող եւ ժամանող ուղեւորների հոսքերը: Համալիրում ուղեւորահոսքերի սպասարկումը կը սկսուի այս տարուայ հոկտեմբերից: Օդանաւակայանի ենթակառուցածքի եւ շինութիւնների արդիականացման, միջազգային չափանիշներին համապատասխան բարձրորակ ծառայութիւնների մատուցման ուղղութեամբ աշխատանքներն իրականացրել է 2002-ից:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐՆ ԱՅԱՐՈՆ ԱԴԻԲԵԿԵԱՆԻՆ ԱՆՈՒԱՆԵԼ ԵՆ «ՍՏԱԽՕՍ», «ԱՆՄԵՂՍՈՒՆԱԿ» ՈՒ «ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆԻ ՈՐԴԻ»

Հայաստանի թէ իշխանական, թէ ընդդիմադիր քաղաքական ուժերին գայրացրել է սոցիոլոգ, «Սոցիոմետր» կենտրոնի տնօրէն Ահարոն Ադիբեկեանի յայտարարութիւնը, որով նա կասկածի տակ է դրել 1991-ին Հայաստանի անկախութեան հանրաքուէի արդիւնքները:



Ահարոն Ադիբեկեան

Նա Սեպտեմբեր 20-ի ասուլիսում նշել է, թէ 1991թ. Սեպտեմբերի 21-ի Անկախութեան հանրաքուէին մասնակցել է ընտրելու իրաւունք ունեցողների միայն 40 տոկոսը, իսկ բնակչութեան 60 տոկոսը դէմ է եղել անկախութեան գաղափարին:

դա նոյնն է, որ կասկածի տակ դնի իր գոյութիւնը: Ես դեռ չեմ ուզում հաւատալ», - նշեց նա:

Աւելի քան կոշտ էր Հայոց Համազգային Շարժումը կուսակցութեան վարչութեան նախագահ Արամ Մանուկեանի արձագանքը: «Ահարոն Ադիբեկեանը պարզապէս «անբարոյականի որդի» է, որ նման բան է յայտարարում: Թող գոնէ միջազգային դիտորդների գնահատականներն ուսումնասիրէր», - նշեց Մանուկեանը՝ սոցիոլոգին որակելով հայերէնում յայտնի մի հայհոյանքով, որը հրապարակման ենթակայ չէ:

«Որեւէ բանական մարդ, ով անմեղսունակ չէ, չի կարող կասկածի տակ դնել անկախութեան հանրաքուէի արդիւնքները», - NEWS.am-ի թղթակցի հետ գրոյցում նկատեց Ազգային ժողովի փոխնախագահ, ՀՀԿ անդամ Մամուէլ Նիկոյեանը:

«Ես անկեղծ ասած չեմ հաւատում, որ ոեւէ մարդ, ով չի ընդունութեան հետ բարդոյթներ չունի, կարողանայ նման միտք ասել: Չէ որ այդ օրը բոլորը փողոցում էին, եւ բոլորի մօտ տրամադրութիւնը տօնական էր: Միշտ լորտը անկախութիւն էր: Ողջ ժողովուրդը ինքնաբերուի գնաց եւ ասաց «այո»: Փորձել կասկածի տակ դնել հանրաքուէի արդիւնքները,

Յիշեցնելով, որ ըստ պաշտօնական տուեալների, ՀՀ անկախութեան հանրաքուէին մասնակցել է 2 մլն. 56 հազար 792 մարդ, կամ ընտրողների մօտ 97 տոկոսը: «Այո» է ասել 2 մլն 42 հազար 617-ը կամ 94, 99 տոկոսը, «Ոչ»՝ 10 հազար մարդ:

ԼՈՒՐԵՐ

ՆԱԼԲԱՆԴԵԱՆԸ ԹԵՅՐԱՆՈՒՄ ՅԱՆԴԻՊԵՑ ԱՐՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՅԵՏ



Տեսարան մը Ահմադիյեթադ (Աջին) Նալբանդեան հանդիպումէն. Կեդրոնը՝ թարգմանիչը:

Իրանը շահագրգռուած է բարեկամ Հայաստանի հետ յարաբերութիւնների առաւել ամրապնդմամբ: Այդ մասին յայտարարել է Իրանի նախագահ Մահմուդ Ահմադիյեթադը, Սեպտեմբեր 17-ին թեհրանում ընդունելով Հայաստանի արտգործնախարար էդուարդ Նալբանդեանին:

Արտգործնախարարութեան մամուլի եւ տեղեկատուութեան վարչութեան փոխանցմամբ՝ Նալբանդեանը Ահմադիյեթադին է փոխանցել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի ուղերձն ու բարեմաղթանքները: Իրանի նախագահը խնդրել է իր ջերմ ողջոյններն ու բարեմաղթանքները փոխանցել Հայաստանի նախագահին եւ ժողովրդին:

Հանդիպման մասնակիցները գոհունակութիւն են յայտնել երկու երկրների միջեւ զարգացող համագործակցութեան առումով՝ ընդգծելով ակտիւ փոխալսելութիւնները, բարձր մակարդակի քաղաքական երկխօսութիւնը, տնտեսական եւ մշակութային կապերը, շեշտել են երկկողմ պատրաստակամութիւնը՝ առաւել զարգացնելու փոխշահաւէտ յարաբերութիւնները:

Իրանի մայրաքաղաքում կայացել են նաեւ էդուարդ Նալբանդեանի եւ Իրանի արտգործնախարար Ալի Աքբար Սալեհիի բանակցութիւնները:

Սալեհին շնորհակտութիւն է յայտնել Իրանի նախագահին Հայաստանի անկախութեան 20-ամեակի կապակցութեամբ եւ նշել, որ երկու հարեան երկրների միջեւ բարիդրացիական յարաբերութիւններն օրէջօր առաւել ամրապնդուած են:

Հայաստանի արտգործնախարարի ընդունմամբ՝ Հայաստանի եւ Իրանի միջեւ չկան խնդիրներ, եթէ կան տեխնիկական հարցեր, ապա դրանք լուծուած են ընդհանուր ջանքերով:

Պայամանաւորութիւն է ձեռք բերուել յաջորդ տարի Հայաստանի եւ Իրանի միջեւ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատման 20-ամեայ տարեդարձի կապակցութեամբ միջոցառումների կազմակերպման վերաբերեալ:

ԵՐԱՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՍԿՍԵԼ ԿԻՉԱՅԻՆ ՌԵԺԻՍԻ ԴԻՐԱՑՄԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՅԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՏ

Սեպտեմբեր 20-ին Եւրայանձնաժողովը առաջարկել է սկսել Եւրամիութեան եւ Հայաստանի միջեւ կարճաժամկէտ կեցութեան վիզաների տրամադրման ընթացակարգերի դիւրացման, ինչպէս նաեւ անօրինական միգրանտների վերադարձի ապահովման վերաբերեալ համաձայնութիւնների շուրջ բանակցութիւնները: Այդ մասին ասուած է Հայաստանում Եւրամիութեան պատուիրակութեան տարածած հաղորդագրութիւնում:

Ինչպէս ընդգծել է Եւրամիութեան ներքին գործերի յանձնակատար Սեսիլիա Մալստրոյոմը, վիզային ռեժիմի դիւրացումը «կը բարելաւի Եւրամիութեան եւ Հայաստանի միջեւ համագործակցութիւնը եւ փոխանակումները»: «Վիզային ռեժիմի դիւրացման եւ վերադարձի ապահովման համաձայնութիւնները Արեւելեան գործընկերութեան շատ շօշափելի արդիւնքներն են, եւ ես գիտեմ, թէ որքան շատ բան է նշանակում սա այդ երկրների քաղաքացիների համար», - յայտարարել է յանձնակատարը:

Եւրամիութեան պատուիրակութեան հաղորդագրութեան համաձայն, վիզային ռեժիմի դիւրացումը ներառուած է վիզա ստանալու համար պահանջուող փաստաթղթային հիմնաւորման պարզեցում, վաւերականութեան երկար ժամկէտով բազմակի վիզաների տրամադրման հնարաւորութիւն, այցելուների որոշակի կատեգորիաների համար վիզաների տրամադրման վարձավճարների նուազեցում եւ այլ մեխանիզմներ:

«ՌՅՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒՂՈՒԱԾ ԵՆ ԶՕՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ ՍՈՌԱՆԱԼՈՒՆ»

«Չենք Լուելու» երիտասարդական նախաձեռնութիւնը յիշեցնում է, որ անցել է արդէն 4 ամիս, ինչ Սոչիի Լազարեւի շրջանի վոլկոնկա գիւղում «տեղական իշխանութիւնների եւ Ռուսաստանի հայերի միութեան (ՌՀՄ) ճնշման տակ ապամոնտաժուեց Հայաստանի, Ռուսաստանի եւ Բուլղարիայի լեզենդար գեներալ Անդրանիկ Օզանեանի արձանը: Սոչիի հայերի նախաձեռնութեամբ տեղադրուած յուշարձանը մէկ օր էլ չգոյատեւեց»:

Անդրանիկի յուշարձանի ապամոնտաժումը պայմանաւորուած էր Թուրքիայի կողմից ճնշումներով, որը սպառնում էր կասկածի տակ դնել Սոչիում 2014թ. Օլիմպիական խաղերի անցկացումը, չիշեցնում է նախաձեռնութիւնը:

«Տեղի ունեցածը առաջացրեց խիստ բացասական ռեակցիա թէ՛ Հայաստանում, թէ՛ Ռուսաստանում: ՌՀՄ մոսկովեան ղեկավարութիւնն էլ շտապեց խուսանաւել Սոչիի իր ներկայացուցչութեան գործողութիւններից՝ փոխնախագահ Գերման Անանեանցի շուրջը լուրջ յայտարարելով, թէ բոլոր խնդիրները լուծուած են եւ յուշարձանը կրկին կը տեղադրուի մօտակաջ ժամանակներում:

Սակայն ժամանակն անցնում է, իսկ սալը տեղից չի շարժուած: Աւելին՝ տպաւորութիւն է ստեղծուում, որ լուծել այդ հարցը որեւէ մէկը չի պատրաստուում, իսկ ՌՀՄ գործողութիւններն ինչպէս Մոսկուայում, այնպէս էլ Սոչիում, ուղղ-



ուած են Անդրանիկի մասին մոռանալուն:

Օգտուելով նրանից, որ Երեւանում բացուած է «Հայաստան-Սփիւռք» ներկայացուցչական համաժողով, որին մասնակցում են սփիւռքահայեր ամբողջ աշխարհից, այդ թւում՝ Ռուսաստանի հայերի միութիւնից, «Չենք Լուելու» երիտասարդական նախաձեռնութիւնը դիմում է համաժողովի պատուիրակներին Ռուսաստանի հայերի միութեան վրայ ազդեցութիւն ունենալու կոչով, որպէսզի Անդրանիկի արձանի վերադարձի հարցը լուծուի հնարաւորինս կարճ ժամկէտում», - նշում է նախաձեռնութեան տարածած հաղորդագրութիւնում:

«Չենք Լուելու» երիտասարդական նախաձեռնութիւնը յայտնում է նաեւ, որ Ռուսաստանաբնակ հայ երիտասարդութեան բազմաթիւ խնդրանքներով Ռուսաստանի մարտերում ստեղծուելու են «Չենք Լուելու» երիտասարդական նախաձեռնող խմբեր, որոնցից առաջինը արդէն սկսել է գործել Սոչի քաղաքում: Խմբի ղեկավարն է 23-ամեայ Արմէն Յովհաննիսեանը:

«ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱԴՐԲԵՉԱՆԻ ՕԿՈՒՊԱՑՈՒԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» ԿԵՏԸ ՄԱԿ-Ի ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Ադրբեջանը Միացեալ ազգերի կազմակերպութեան Գլխաւոր ասամբլեայի 66-րդ նստաշրջանի օրակարգ է ներառել «Իրավիճակը Ադրբեջանի օկուպացուած տարածքներում» կէտը: Այս հարցին նախատեսուած է անդրադառնալ ասամբլեայի լիազումար նիստում՝ «Համաշխարհային խաղաղութեան ու անվտանգութեան պահպանումը» թեմայով քննարկման ժամանակ:

Կովկասի ինստիտուտի փոխտնօրէն, քաղաքագէտ Սերգէյ Մինասեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում նշեց, որ Ադրբեջանի կողմից արդէն երեք տարի օրակարգ ներառուող այս հարցը հերթական անգամ չի քննարկուի՝ կը յետաձգուի:

«Պատճառը գերտէրութիւններն են, որոնք չեն ցանկանում քննարկել այս հարցը ՄԱԿ-ում», - ասում է քաղաքագէտը՝ շեշտելով, որ անհանգստանալու կարիք չկայ: «Մենք տեսնում ենք մի իրավիճակ, երբ որ նմանատիպ փաստաթղթի քննարկման ժամանակ համանախագահ երկրները՝ Ֆրանսիան, Միացեալ Նահանգները եւ Ռուսաստանը դէմ են արտայայտուում այդ քննարկմանը: ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի անդամ երկրները ոչ մի ձեւով

չեն փորձել այդ ակտերը իրականացնել նոյն ձեւով, ինչպէս դա եղել է Կոստովոյի, Իրաքի կամ Լիբիայի հանդէպ: Այսինքն՝ խօսքը գնում է այն մասին, որ ՄԱԿ-ը լինելով միջազգային կառույց, աւելի շատ ղեկավարտիլ դաշտում է գործում, իսկ իրական քաղաքականութիւնը որոշում են կոնկրետ որոշ գերտէրութիւնները»:

Քաղաքագէտը գտնում է, որ եթէ ՄԱԿ-ը անգամ քննարկի այս հարցը, ապա այն կարող է ունենալ միմիայն տեղեկատուական ու քարոզչական նշանակութիւն ու ազդեցութիւն: Այս պարագայում անգամ այն չի կարող ազդեցութիւն թողնել միջազգային գերտէրութիւնների վերաբերմունքի վրայ: Նաեւ չի անդրադառնալ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան դէպքում գործող ամենակարեւոր գործօնի՝ իրական ռազմական ու ռազմաքաղաքական հաւասարակշռութեան վրայ:

Կովկասի ինստիտուտի փոխտնօրէնը կարծում է, որ ՄԱԿ-ի օրակարգից այս փաստաթուղթը կարող է հանել միայն Ադրբեջանը: Միւս կողմից, ՄԱԿ-ի կառույցի բիւրոկրատական առանձնայատկութիւններից ելնելով, մօտակաջ ժամանակներում այս փաստաթուղթը շրջանառութիւնից դուրս չի գալ, ամփոփում է քաղաքագէտը:

massispost.com
daily news updates

Ձեր Ճանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ԼՈՒՐԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 20-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԶՕՐԱՀԱՆԴԵՍ

Շարունակում է 1-ին

Հինգե Զայաստանի օրհներգը, որմ է ետք գինուորական ուժերու գլխաւոր սպայակոյտի պետ Եուրի Խաչատուրով գինուժը կոչեց հանդիսաւոր երթի:

Ներկայացուցեցան գրոհային ինքնաթիռները: Նշուեցաւ, որ ներկայացուած ուսումնական «L-39» ինքնաթիռներով, զորս կ'առաջնորդէ փոխգնդապետ Յարութիւն Զաքարեան, կ'իրականացուի երիտասարդ օդաչուներու պատրաստման գործընթացը:

Յաջորդը հրապարակ մտան հետախուզական միաւորումները, որ գերժամանակակից սպառազինութեամբ, մարտական գերազանց պատրաստուածութեամբ կրնան

գրահահրասայլային գործասերը, գորավարժութիւններու ժամանակ կ'արժանանան ամենաբարձր գնահատականներու:

Հրաձիգներուն յաջորդեց հրթիռային զորքերու եւ հրետանիի ստորաբաժանումները: Առաջին շարքի մէջ հրետանային հետախուզութեան եւ կրակի կառավարման եւ հայրենական արտադրութեան համակարգեր, որոնք կրնան մինչեւ 20 քմ հեռաւորութեան վրայ յայտնաբերել եւ որոշել հակառակորդի գինատեսակը:

Հայրենական արտադրութեան անօդաչու թռչող սարքերը բնաւ չեն գիջիր արտերկրի մէջ արտադրուող յայտնի ընկերութիւններու անօդաչու սարքերուն: Անոնք կրնան գործնական խորութեան վրայ



Զօրահանդէսին մասնակցած հրթիռային զորքերը



որեւէ պահուն կատարել հետախուզական խնդիր հակառակորդի թիկունքին: Յատուկ սպառազինութեան տեխնիքան համալրուած է արդիականացուած գնդացիներով, բարձր ճշգրտութեամբ հակահրասայլային կառավարուող հրթիռային համալիրներով, հեռահար նշանառու մարտ վարելու գերճշգրիտ դիպուկահարներու գիշերային տեսանելիութեան եւ այլ մարտական միջոցներով:

«Սփ-80» տիպի գրահամեքենաներով անցան հրաձգային ստորաբաժանումները. նշուեցաւ, որ հրասայլային, մոթոհրաձգային եւ

նկարահանել եւ ճիշդ ժամանակին նկարահանել եւ փոխանցել հակառակորդի մասին գերճշգրիտ տուեալներ:

Հրապարակով անցան 122 մմ եւ 152 մմ տրամաչափի շարժական հրետանային ստորաբաժանումները, որոնք 15-18քմ ինչպէս նաեւ 5 քմ խոցման հնարաւորութիւն ունին:

Յաջորդը հրապարակ մտան հակահրասայլային հրետանիի ստորաբաժանումները՝ մինչեւ չորս քմ կրակի հնարաւորութիւն ունեցող «կոնկուրս» համալիրներով խոցում են հակառակորդի գրահատեխնի-

կան, իսկ 100 մմ տրամաչափի «Me-12» թնդանօթները կրնան մինչեւ 8 քմ հեռաւորութեամբ խոցել հակառակորդի գրահատեխնիկան:

Երթը շարունակեցին մարտավարական մինչեւ 120 քմ հեռահարութեամբ հրթիռային ստորաբաժանումները, որոնք կրնան գերճշգրիտ, արագ հարուածել հակառակորդը:

«C-300» գենիթահրթիռային համակարգը կը վերահսկեն ՀՀ ողջ օդային տարածքը՝ կասեցնելով հակառակորդի յարձակումները իրենց տարածքի խորքին:

«Անկախութեան գորահանդէսը շատ առումներով նախորդ գորահանդէսներէն բացառիկ էր: Թիւով այս հինգերորդ գորահանդէսը

բացառիկ էր ոչ թէ մեծաքանակ անձնակազմով, այլ իր կազմակերպուածութեամբ, գինտեխնիկայով: Իսկ գորահանդէսի փակումը, որն ուղեկցուեց շարային դեֆիլէով (սայտակ հաշուարկուած գործողութիւնների պար է), ուղղակի ցնցող էր»,- լրագրողներու հետ հանդիպման ժամանակ ըսաւ ռազմական փորձագէտ Արծրուն Յովհաննիսեան:

Հակառակ Սերժ Սարգսեանի հրաւերին Զայաստանի նախկին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը եւ նախկին բռնապետ Ռոբերտ Քոչարեան չեն մասնակցած տօնական գորահանդէսին եւ Անկախութեան 20-ամեակին նուիրուած այլ միջոցառումներուն:

ՍՓԻՌՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԴԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Շարունակում է 1-ին

հուրդն ունի»,- «Հաւատում եմ, որ Զայաստան, Արցախ, Սփիւռք միասնութիւնը կարող է սարեր շարժել: Աւելին՝ որոշ սարեր արդէն շարժուել են»:

Սփիւռքի քաղաքական կառուցներու ներկայացուցիչները իրենց ելոյթներուն մէջ անդրադարձան 20-ամեայ անկախ Զայաստանի մէջ գոյութիւն ունեցող մտահոգիչ խնդիրներուն:

Բացման հանդիսութեան իրենց խօսքը ուղղեցին նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ. եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա:

Այնուհետեւ համաժողովի մասնակիցներուն ողջոյնի խօսք ուղղեցին նախագահ Բակօ Սահակեան, Հայ կաթողիկէ Ներսէս Պետրոս ԺԹ. պատրիարք, Հայ Աւետարանական Եկեղեցւոյ վերապատուելի Մկրտիչ Մելքոնեան, ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ Սեդրակ Աճէմեան (ելոյթը տեսնել առանձին) ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան, ՌԱԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ Մայք Խարապեան եւ Ռուսաստանի Հայերու Միութեան նախագահ Արա Աբրահամեան:

Խօսք առաւ նաեւ Զայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան, որ ժողովի մասնակիցներուն ներկայացուց Լեւոնային Ղարաբաղի հիմնահարցի կարգաւորման ներկայ փուլը: Համաժողովի երկրորդ եւ

վերջին օրը ներկայացուցան համահայկական ընկերային, տնտեսական, քաղաքական եւ մշակութային հարցերու շուրջ բազմաթիւ զեկոյցներ:

Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեան լրագրողներու հետ հանդիպման ընթացքին յայտարարեց, որ հուշակած է համազգային ամենազխաւոր խնդիրները. «Հայոց պետութեան հզօրացում, ուժեղացում: Երկրորդը՝ Լեւոնային Ղարաբաղի հարցի խաղաղ եւ միջազգային նորմերին համապատասխան վերջնական լուծումների գտնում: Երրորդը՝ Յեղաապստամբութեան ճանաչման, դատապարտման եւ հետեւանքների վերացման հարցի հետեւողական լուծում: Չորրորդը՝ հայապահպանութիւն եւ պայքար ուժացման դէմ՝ Սփիւռքում: Եւ վերջապէս հինգերորդը՝ հայ եկեղեցու դերի բարձրացում եւ նրա շուրջը մեր համախմբում»:

Սփիւռքի նախարարը խոստացաւ նաեւ հետեւելը. «Առաջիկայ ամիսներին կը մշակենք յստակ ծրագրեր այս հարցադրումները իրականութիւն դարձնելու համար, այդ ամէնը կ'ուղարկենք համահայկական կազմակերպութիւններին, կը ստանանք նրանց վերջնական կարծիքը եւ կը դարձնենք օրացուցային ծրագիր՝ մեր աշխատանքները իրականացնելու համար»:

Համաժողովի ընթացքին մասնակիցներէն շատեր մտահոգութիւն յայտնեցին արտագաղթի վերաբերեալ:

Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀԱԻՐՈՒՎԱԿԱՆ ԽՕՍՔԸ

Շարունակում է 1-ին

խիբը: Մեր հաստատ համոզմամբ, անկախութիւնը կ'ամրապնդուի աւելիով, այն կը դառնայ անխոցելի երբ ներքին կեանքին մէջ եւս խորանայ ժողովրդավարութիւնը, նուազագոյնի իջնայ դասակարգերու միջեւ ահաւոր բեւեռացումը: Ազգային մարտունակ ու կազմակերպուած բանակ ու ընկերային արդար իրավիճակ.

Ասոնք եմք այն գրաւականները, որոնցով հայ ժողովուրդն իր անկախութիւնը ինքնապաշտպանութիւնով պիտի նուաճէ: Այս, բարձրագին եւ նոր 20 ամեակները:

Փառք դժուարին պայմաններու պայմաններու մէջ անկախ հայրենի կերտած հայ ժողովուրդին:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւն Երեւան. 20.09.2011



Ս.Դ.Յ.Կ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԸՆԿ. ՍԵԴՐԱԿ ԱԳԵՄԵԱՆԻ ԽՕՍՔԸ ՍՓԻՒՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԴԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ՅԱՄԱԺՈՂՈՎԻՆ



Որպես աշխարհասփիւռ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան ատենապետ, մեծ պատիւ է ներկայ գտնուիլ եւ ելոյթ ունենալ Մայր Հայրենիքի անկախութեան 20-ամեայ յոբելեանին նուիրուած այս խորհրդաժողովին. Անկախութիւն, որուն տասնեակ տարիներ սպասած ու երազած ենք, անկախութիւն, որուն ճամբուն վրայ բազմաթիւ զոհեր տուած ենք, անկախութիւն, որ եղած է ու կը մնայ մեր սրբութիւն սրբոցը, անուրանալի արժէքը, աննահանջ նուաճումը, անկախութիւն, որուն յարատեւման համար դեռ պայքար ունինք, դեռ մեծ պայքար ունինք, հազարաւոր մարտահրաւէրներ, որոնց կրնանք վստահութեամբ ըսել, պատրաստ ենք ընդունելու եւ լուծելու: Շուրջ հազարամեակ ընդ անկախութիւն շունեցող մեր ժողովրդին համար Հայրենիքի մէջ ինքնիշխան պետութիւն ստեղծելը, սեփական բանակ ունենալը, յաղթելը մեզի պարտադրուած պատերազմը՝ Նոր Երեւոյթներ են, որոնցմով անգամ չեն կրնար հպարտանալ նոյնիսկ աշխարհակալ շատ ազգեր ու պետութիւններ:

Սիրելի ներկաներ
Անկախութեան այս 20 տարիներուն ընթացքին մենք ունեցանք ինչպէս հսկայական ձեռքբերումներ, այնպէս նաեւ այդ տարիներու բերումով առարկայական եւ ենթակայական դժուարութիւններ եւ բացթողումներ: 20-ամեայ պատանին, իսկ մեր անկախութեան տարիքն իսկապէս պատանեկան է, իրաւունքն ունի որոշակի բացթողումներու, սակայն տարիքին մեծացումին հետ այդ բացթողումները ոչ թէ պէտք է խորանան, այլ բուժուին, վերանան, որպէսզի մենք բոլոր միասին ունենանք այն Հայաստանը, որուն համար տասնամեակներ պայքարած ենք:

Աւերիչ երկրաշարժն յետոյ պարտադրուած պատերազմը յաղթելը, անկախ Հայաստան եւ Արցախ կերտելը դիւրին գործ չէ: Աշխարհի վրայ շատ քիչ երկիրներ իրենց անկախութիւնը կերտած են այսպիսի դժուարին պայմաններուն մէջ, որ ունեցան Հայաստանն ու Արցախը: Չնայած այդ ամէնուն՝ մենք յաղթեցինք, սակայն այլ աւելի մեծ յաղթանակ կ'ըլլայ այն, որ մենք ամրագրենք մեր ունեցած յաջողութիւնները միջազգային ասպարէզին մէջ: Այսօր այստեղ արդէն շատ խօսուեցաւ Լեւոնային Ղարաբաղի ինդրին մասին: Յստակ է, որ աշխարհի բոլոր հայերը կը ցանկանան միայն մէկ բան՝ Արցախի անկախութեան միջազգային ճանա-

չումը, որպէսզի արցախցին իր հողին վրայ կարենայ ինքնուրոյն, առանց թշնամական սարսափի կերտել իր ապագան: Հնչակեան կուսակցութիւնը կը հաւատայ, որ հայութեան առջեւ կան ինդիրներ, որոնց լուծումը համազգային միակամ ջանք եւ եռանդ կը պահանջէ. Արցախի ինդիրը ոչ միայն արցախցին, այլ ամբողջ հայութեան ինդիրն է, Սփիւռքի հայապահպանութեան հարցը ոչ միայն Սփիւռքին, այլ ամբողջ հայութեան ինդիրն է:

Այսօր այստեղ՝ Սփիւռք-Հայրենիք հերթական համաժողովին, մենք բոլորս եկած ենք աշխատելու, լուծումներ գտնելու մեր ժողովուրդի առջեւ դրուած մարտահրաւէրներուն, իսկ այդ աշխատանքը կ'ենթարդէ ինդիրներուն յստակ բարձրացումը, անոնց հանդէպ շիտակ մօտեցումը եւ ոչ թէ միայն գեղեցիկ ճառեր: Ուստի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան անունով պարտք կը համարեմ անդրադառնալ քանի մը ինդիրներու շուրջ, որոնք, վստահ եմ թէ կը մտահոգեն այստեղ գտնուողները: 20-ամեայ քաղաքական կառավարման այս ձեւը ցոյց տուաւ, որ այն չի կրնար լուծել քաղաքացիին առջեւ դրուած կենսական հարցերը եւ մենք իսկապէս կարիք ունինք Հայրենիքին մէջ համակարգի փոփոխութեան:

Այսօր Հայաստանի համար կենսական նշանակութիւն ունին ընկերային արդարութիւնն ու դասակարգերու միջեւ տնտեսական բեւեռուածութիւնը: 1991 թուականէն սկսած Հայաստանէն արտագաղթը, որ անցնող քսան տարիներու ընթացքին ոչ միայն չդադրեցաւ, այլ շարունակեց պահպանել իր ահեղ թափը, որ կ'անհանգստացնէ մեզ բոլորս՝ թէ՛ Հայաստանի իշխանութիւնները, թէ՛ Սփիւռքի կազմակերպական կառույցները. Գաղտնիք մը չէ, որ մարդիկ իրենց բնօրրանէն կ'արտագաղթեն ընկերային դժուարութիւններու պատճառով, որովհետեւ չեն կրնար Մայր Հայրենիքին մէջ իրենց հանապազօրեայ հացը գտնել ճակտի արդար քրտինքով: Համաշխարհային տնտեսական ճգնաժամը եւ Հայաստանի իշխանութիւններու տարած պայքարը, անոր հանդէպ, հակնալի են մեզի համար, բայց առկայ տնտեսական դժուարութիւնները բացատրել միայն այդ հանգամանքով, մոռնալով տնտեսական մենաշնորհները եւ այդ մենաշնորհներուն ներկայութիւնը քաղաքական ասպարէզին

մէջ, ընդունելի չեն մեր կողմէն, իսկ երբ տնտեսական գերակայ դիրքն ու քաղաքական գերակայ վիճակը կը միանան իրարու, այստեղ արդէն իբրեւ տուժող կողմ հանդէս կու գայ ժողովուրդը՝ Հայաստանի պարզ քաղաքացին: Այս բոլորին կողքին կարեւորագոյն ինդիր է Հայաստանի տնտեսական համաչափ զարգացումը: Մայրաքաղաք Երեւանի Կեդրոնը օր օրի աւելի կը զարգանայ, իսկ սահմանամերձ շրջանները մատնուած են անուշադրութեան: Այս կարեւոր ինդիրը մենք մեր օրինակով ենք փորձել ցոյց տալ շատ փիւռաքահայերու, որպէսզի վերջիններս ալ գան ու ներդրումներ ընեն Հայաստանի շրջաններուն մէջ: Իր հերթին, սակայն, կառավարութեան կ'ակնկալուի յաւելալ դիւրութիւններ շրջաններու մէջ եղած արդիւնաբերական, գիւղատնտեսական, զբօսաշրջիկական նախաձեռնութիւններուն:

Տնտեսական դժուարութիւններու շուրջ պատկերացումները երկրորդական կը մնան, երբ գանտնք կը բաղդատես աւելի ցաւալի երեւոյթի մը հետ, որն է օրէնքի առջեւ հաւասարութեան բացակայութիւնը, երբ մէկ կողմէ կեցած են մենատէրերը եւ ձեւաւորուած մենաշնորհները եւ միւս կողմին պարզ աշխատաւոր ժողովուրդը, որ կապրի կաշառակերութեան, պետական պաշտօնէութեան հատուածի մը կամայականութեան պայմաններուն տակ: Մենք կ'ողջունենք այս արատաւոր երեւոյթներուն դէմ նախագահի նախաձեռնած բարեփոխումները եւ կատարած յայտարարութիւնները, սակայն վստահ ենք, որ առկայ վիճակը շտկելու համար դեռ հսկայական գործ կայ ընելիք: Սիրելի բարեկամներ.

Մեր կարծիքով, Սփիւռքի համար հիմնական ինդիրը եղած է ու կը մնայ հայապահպանութեան հարցը: Այս համաժողովի յայտարարութեան նախագիծին մէջ կը նշուի, որ Հայաստանի պետութիւնը

յանձնառու մասնակցութիւն պիտի ունենայ հայապահպանման աշխատանքներուն մէջ: Մենք կ'ողջունենք այս պատասխանատու կեցողութիւնը եւ յոյսով ենք, որ նման ձեւակերպումը ոչ թէ կը մնայ թուղթի վրայ, այլ կը դառնայ իրավասու մարմիններուն ամէնօրեայ աշխատանքը եւ մտահոգութիւնը: Հայապահպանութեան ամենակարեւոր առարկան հայ երիտասարդին հայ պահէն է, այն ինչ որ եւս կը նշուի այս համաժողովի հռչակագրի նախագիծին մէջ. Այս ուղղութեամբ Հայաստանի պետութեան որոշ նախաձեռնութիւնները՝ «Արի տուն» ծրագիր, սփիւռքահայ երիտասարդներու ամառնային բանակումներ, համահայկական խաղեր եւ այլն, միանշանակ ողջունելի են մեր կողմէ, եւ մենք թիկունք կը կենանք նմանատիպ ծրագիրներուն: Աւելին, մեր փափաքն է, որ այսպիսի ծրագիրները շատնան եւ ընդլայնուին:

Յարգելի ներկաներ
Դեռեւս քանի մը ամիս առաջ Ֆրանսայի խորհրդարանին մէջ ՍԴՀԿ-ի կողմէ նախաձեռնուած Հարաւային Կովկասի վերաբերեալ խորհրդաժողովին առիթ ունեցայ բարձրաձայնել համահայկական մարմնի մը ստեղծման անհրաժեշտութեան մասին: Այսօր ուրախ ենք արձանագրելու, որ Հայաստանի իշխանութիւններու կողմէ Յեղասպանութեան 100-ամեայ տարելիցին նուիրուած համազգային մարմնի ստեղծումը, արդէն իրականութիւն է, եւ մենք՝ հայ ժողովուրդի ներկայացուցիչներս, պիտի մէկ սեղանի շուրջ քննարկենք հայութեան համար այդքան կարեւոր նկատուող Յեղասպանութեան հարցը եւ պահանջատիրական ինդիրները:

Սիրելիներ, կ'ողջունենք Սփիւռք-Հայրենիք այս խորհրդաժողովը, կը մաղթեմ անոր, նախաձեռնողներուն եւ բոլոր մասնակիցներուն ամբողջական յաջողութիւն: Շնորհակալութիւն

Ararat Charter School Association has the pleasure of inviting you to an Art Exhibition fundraiser benefiting Ararat Charter School.
10.1.11

Artists

- Anahid Boghosian
- Borj Chorbajian
- Keikor (Keko) Hovagimian
- Yervand Kechar
- Stella Kuvonjian
- Vahé Tavitel LA
- Alexander Sargsyan
- Anush Semerjian
- Susanna Sevogian
- Haikekie Tataryan
- Vahé Yervoyan
- Sevraon Vassilyan Yeretian

Ararat CHARTER ASSOCIATION

ԱՐԴԵՕՔ 20 ՏԱՐԻՆ ՇԱՏ ԶԵՂԱԲ՝

ՍՈՒՐԷՆ ԽՈՒԴԱՆԵԱՆ

Արդեօք 20 տարին շատ չեղա՞նք Անցումային շրջան կոչուելու համար, Հայաստանի Անկախութեան 20րդ տարին ենք նշում եւ տօնում: Հպարտութեան զգացումը առկայ է, սակայն մտորումների մի ամբողջ նիւթեր են կուտակուած առջեւում որոնք հանգիստ չեն տալիս:

Անկախ պետականութեան գրեթէ բոլոր ատրիբուտները «միջազգայնօրէն ճանաչուելու եւ համաշխարհային հասարակութեանը ինտեգրուելու համար ձեռք բերեցինք»: Սակայն անկախացած երկրի հազիւ ձեւը պահպանելով բովանդակութիւնը թողեցինք մնաց քառասուն եւ յուսալքող:

Հայաստանի Անկախութեան 20ամեայ պատմութիւնը Հայ Մարդու հոգեկերտուածքի ձեւավորման վայրէջքներումն էր լի պատմութիւն է: Հպարտութեան եւ ոգեւորութեան եւ միասնականութեան ոգով դիմաւորեցինք անկախութեան յաջորդած տարիները: Նոյն ոգով դիմակայեցինք այդ անցումային շրջանի բնութեան արհաւիրքը, պատերազմը եւ շրջափակումը: «Յուրա ու մութ» տարիները ոմանց համար եթէ դաժան բաց հպարտ տարիների վերջուէն էին, ոմանց համար էլ քաղաքական շարժառիթներով շահաբաժին կորզելու միջոց դարձան՝ սակայն փաստը մնում է փաստ, որ այդ նոյն տարիներին էր, որ դարերի պատմութեան ընթացքին բեկում

մտցուեց, եւ Արցախեան հողեր ազատագրուեցին եւ ոչ միայն հողեր, հայ մարդը ազատագրուեց տառապող գոհի հոգեվիճակից:

Փառք Աստուծոյ, ճակատամարտը յաղթեցինք, եւ ինչպէս համայնապարները կ'ասէին «սուր փառքով դրեցինք պատեան»: Յաղթարշաւը աւաղ չունեցաւ շարունակականութիւն եւ տարածում հայրենակերտման միւս բնագաւառներին վրայ: Դժուար է ասել, արդար է թէ ոչ, այն որ քաղաքական եղանակ ստեղծող որոշ այրեր հարբեցին այս յաղթանակից: Վերին ատեաններում անհարկի դասաւորումներ եւ վերադասաւորումներ տեղի ունեցան ճակատագրական որոշումների զգալի մասը կայացուում էր զգացմունքային հողի վրայ: Ղարաբաղի նախագահին որպէս Հայաստանի վարչապետ բերելը, հիմնականում ուղղուած էր միջազգային արեւնայում, այն հասարակական կարծիքի մշակմանը, թէ Ղարաբաղցի ու Հայաստանցիին նոյնն են: Ժամանակին դա համարուեց հանձարեղ քայլ, սակայն կեանքը եւ իրադարձութիւնների ընթացքը, ցոյց տուեց, որ բոլորովին էլ հանձարեղ քայլ չէր, եւ անարդիւնաւէտ նիւթ էր մատուցում աշխարհակալող ատեաններին: Նրանք գիտէին ով ով է, բաց գիտէին նաեւ իրենց շահերի առաջնայնութիւնը:

Մինչեւ այսօր իշխում է այն տեսակէտը թէ ներկայիս վիճակը, որը կոչում է «ստատուս քուօ» մեզ՝ այսինքն հայերիս ձեռնտու է,

այո, «իրաւացի» են, իշխանութեան ժամանակաշրջանը երկարացնելու համար յարմար է սակայն ազգային պաշարների պահուստը անսպառ չէ, արտաէաղթը այսօր թակուած է բնակչութեան գերակշռող մասի դռները: Ինչ է ուղղում են վաղը աւերակների վրայ թագաւորութիւն հաստատեն: Չի լինելու, այս անգամ բռնուցուած ժողովուրդը իր Սարգարապատեան լեզուով կը խօսի ոչ միայն արտաքին այլ ներքին թշնամու հետ: Սահրետորաբանութիւն չէ: Կոռուծպացուած օլիգարխիկ համակարգը երբէք թոյլ չի տալու ազգային հարստութեան արդարացի բաշխում տեղի ունենայ: Ինչ է այսօր գիւղացու վիճակը: Եթէ ժամանակին հողը յանձնուեց գիւղացուն, անօգնական թողնելով նրան բերքի մշակման եւ իրացման անյաղթահարելի խնդիրների առջեւ, որտեղ կէս-կատակ կէս լուրջ ասում էին, ոչ թէ հողը յանձնուեց գիւղացուն, այլ գիւղացին յանձնուեց հողին: Այսօր նոյն գիւղացուն երկու ճանապարհ է մտացել, կամ պանդուխտի կեանք կամ բաղրակութիւն, վերջինիս հնարաւորութիւնը տալիս են այն մեծահարուստները որոնք կարճ ժամանակաշրջանում կուտակած գումարների հաշուին չնչին գումարներով գիւղացուց հողը առնում են, եւ նրան թոյլ են տալիս այդ հողի վրայ աշխատի օրավարձով:

Գիւղացիական անկախ միութիւն ստեղծելու գաղափարը վարչակարգը համարում է կոմունիստական շրջանին պատկանող հնա-

ցած եւ մերժուած կատեգորիա: Ինչ կոչել այս տեսակ ազատակախութիւնը, մի գուցէ վայրի Լիբերալիզմ: Դրամի կուտակման անյաղթահարելի մարմաջը, կուրացրել է այս վարչակարգի պաշտօնեային, որը պետական կերակրատաշտին կառչած մնալու համար կորցնում է իր սեփական վարքագիծը:

Ժողովուրդային շարժման հուժկու ալիքը, ի գօրու է, մաքրելու աղտոտուած դաշտը, եւ ամէն ինչը եւ ամէն մէկին իր տեղը նստեցնէ ժողովուրդը պէտք է յոյսը դնի իր գօրաւոր այս ուժի վրայ:

Հակառակ դէպքում «անցումային շրջան է» ասելով ժողովուրդին խաբելու կեղեքելու եւ հասարակութեան շերտաւորումը եւս 20 տարով երկարելու է:

Սոյն յօդուածը յուսադրող նուազով աւարտելու համար ասենք որ քաղաքական եւ սոցիալական շարժառիթներով ծաւալուած բողոքները ալիքը, ընդիմադիր դաշտը ամրապնդեց այնպիսի ուժերով, որ բռնապետական համակարգի գոյատեւումը, կամ նրան սպասարկող վարչակարգի գոյութիւնը հարցականի տակ է դրուում: Միայն այս շարժման ղեկավարներին մի բան պէտք է յուշել: Վայրի լիբերալիզմից աւելի գրագէտ լիբերալիզմին անցումը հարցի վերջնական լուծումը չէ: Երկրին սոցիալական արդարութիւն է պէտք, անունը ինչ կ'ուզէք դրէք, միայն թէ մարդը լինի ուշադրութեան եւ հոգատարութեան կենարոնում, անկախ ամէն ինչից:

ՔՐԴԱԿԱՆ «ՆԱԽԱԶԵՌՆՈՂԱԿԱՆ» ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՍԱՐՈ ՍԱՐՈՅԵԱՆ

<p>6300 Wilshire Blvd., Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave., Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
---	---	--

A.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաժողո՞ւ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ՓԱՍՏԻՆԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՄԻԱՑԵԱԼ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՑՈՒ ԾՕՆ ԿԱՆՏՐԻԻ ՀԵՏ



Զախէն աջ Գէորգ Քէօշկէրեան, Խաչիկ Շահինեան, Ճօն Կանտրի եւ Անթօ Շահինեան:

Զորքը շարժվելով, 14 Սեպտեմբեր 2011ին, Փաստինայի Հայ Համայնքի Խորհուրդի ներկայացուցիչները կարեւոր հանդիպում մը ունեցան Փաստինայի Միացեալ Վարժարաններու Համացանցի վերակացու Ճօն Կանտրիի հետ, իր գրասենեակին մէջ:

Նորանշանակ վերակացուն հետաքրքրութիւն ցոյց տուաւ հայկական գաղութի յուզող հարցերու նկատմամբ եւ պատրաստակամութիւն յայտնեց գործակցել մեզի հետ, փարատելու այդ մտահոգութիւնները եւ լաւագոյն կատարելու ի նպաստ բոլոր ուսանողներու առաջնահերթ դաստիարակութեան:

Հոս պէտք է ըսել որ մեր գաղութի գաւազներուն միայն տաւր տոկոսը կը յաճախէ հայկական վարժարան, իսկ մնացեալը իրենց ուսումը կը ստանան հանրային վարժարաններէ ներս:

Պրն. Կանտրի խօսեցաւ նաեւ երկլեզու դասաւանդութեանց մասին եւ յոյս յայտնեց որ սպաննեմքն ի

եւ չինարէնի կողքին շատ շուտով հայերէնն ալ կը դառնայ օտար լեզուներու ուսուցման առարկայ, յատկապէս այն նախակրթարաններէն ներս՝ ուր հայութեան թիւը առաւելագոյնն է դպրոցի աշակերտութեան թիւին մէջ:

Հանդիպումի աւարտին՝ հրաւիրեցինք նոր վերակացուն որ երբ յարմար առիթը ստեղծուի, ծանօթանայ մեր գաղութին եւ մօտէն ճանչնայ մեր ժողովուրդը: Ան ըսաւ թէ արդէն մասնակցած է Հայկական ինքնութեան Փառատօնին՝ որ տեղի ունեցաւ Կիրակի, 31 Յուլիս 2011ին, Փաստինայի Յաղթանակի գօսայգիին մէջ եւ խիստ տպաւորուած:

Այնուամենայնիւ, ան յօժարակամութիւն յայտնեց ներկայ գտնուելու նման հանդիպումի մը՝ որու մանրամասնութիւնները ատենին պիտի հաղորդուին մեր հասարակութեան, մամուլի միջոցաւ: Ապա շնորհակալութիւն յայտնելով՝ բաժնուեցանք Պրն. Կանտրիէն:

ՎԻԵՆՆԱ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ 200-ԱՄԵԱՅ ՅՈՒԲԵԼԵԱՆԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Մխիթարեան Միաբանութեան Վիեննա հաստատուելու 200-ամեայ յոբելեանի գլխաւոր տօնակատարութիւնները տեղի ունեցան Սեպտեմբեր 10-ին, Շաբաթ՝ ակադեմական հանդէսով եւ 11-ին, Կիրակի՝ հանդիսական սուրբ պատարագով, վանքի վերանորոգուած եկեղեցւոյ մէջ, հովանաւորութեամբ Վիեննայի արքեպիսկոպոս կարդինալ Քրիստոֆ Շէօնպորնի:

Ակադեմական հանդէսը, որ նոյնպէս եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ, ունէր խիտ բովանդակութիւն՝ վեց բանախօսութիւններով եւ մէջընդմէջ երգերով: Մուտքը հրաւիրատուով էր՝ բոլորին նախընտրելով տեղ ապահովելու համար: Եկեղեցին ծայրէ ծայր լեցուած էր: Ներկայ էին Աւստրիայի պապական նուիրակ՝ Փեթեր Արքեպիսկոպոս Յուսպրիկըն, տեղական բարձրատիճան եկեղեցականներ՝ եպիսկոպոսներ եւ արքայազներ, հայ առաքելական եկեղեցւոյ նախկին Հայրապետական Պատուիրակ՝ Մեսրոպ արք. Գրիգորեան եւ անոր նորընտիր յաջորդը՝ Հայկազուն Ծ. Վրդ. Նաճարեան, Վիեննայի մէջ Հայաստանի Հանրապետութեան լիազօր դեսպան՝ Աշոտ Յովակիմեան, Հայաստանի, Վրաստանի եւ Ատրպէյճանի համար Աւստրիական դեսպան՝ Միխայիլ Փոսթըլ, Աւստրիայի մշակութի նախարարութեան եւ Վիեննայի մշակութային պետական բաժանմունքի ներկայացուցիչներ, հայ եւ աւստրիացի բարեկամներ: Վենետիկէն եկած էր Միաբանութեան ընդհանուր արքայազը՝ Հ. Եղիա Քիլապեան վարդապետներով ու ժառանգաւորներով:

Ժամը 4-ին: Հանդիսավարը՝ Հարալտ Շիրիքեան հիւրերը ողջունելէն յետոյ, կարգաց օրհնութեան գիրերը՝ Վատիկանէն, Արեւելեան Եկեղեցիներու Միաբանութեան Կարդինալ Լէոնարտօ Սանտրիի, Անթիլիասէն, Մեծի տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.ի եւ Պէյրութէն, Հայ կաթողիկէ Կաթողիկոս-Պատրիարք Ներսէս Պետրոս ԺԹ. Ի կողմէ:

Այնուհետեւ բեմ հրաւիրուեցաւ առաջին բանախօսը՝ Վիեննայի արքայազը՝ Հ. Պօղոս Գոճանեան, որ ամփոփ ներկայացուց Մխիթարեան Միաբանութեան եւ յատկապէս Վիեննայի մասնաճիւղին 200-ամեայ մշակութային գործունէութիւնը: Կրթական, գրական, հայագիտական մարզերէ ներս:

Բանախօսութենէն վերջ Տիւկիւն Նինա Սարգսեան իր նուրբ եւ անուշ ձայնով երգեց Եկման պատարագի «Սուրբ սուրբ»: Այս եւ բոլոր յաջորդող երգերուն կ'ընկերանար երգահանով տիկին Իլոնա Փեթէօշ:

Երկրորդ բանախօսը՝ Պելճիքայէն, Բենեդիկտեան վանքի մը նախկին արքայազը Հ. Միշել վան Փարիս, խօսելով մխիթարեան գաղափարականի մասին՝ շեշտեց անոր մէջ կրօնի եւ մշակութի անբաժան կապն ու միասնութիւնը:

Տիկին Այդա Բաղրամեան իր լեցուն եւ ուժեղ ձայնով երգեց «Stabat Mater»:

Երրորդ բանախօսը՝ Հ. Մեսրոպ Թոփալեան նիւթ առնելով Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան միայն հայագիտական

Հանդէսը սկսաւ կէսօրէ վերջ Շաբ.ը էջ 19

ԹԱՏՐՈՆ «ՀԱՅՐԱՊԵՏՈՒ REFUGEE Է ՔՆՈՒՄ»



Կիրակի, Սեպտեմբերի 11ին Կլենտէյլի Toll Middle School-ի սրահում «Բեմարուեստ» թատերախումբը բեմադրեց «Հայրապետը Refugee է դնում» կատակերգութիւնը: Բեմադրիչն էր իրահանայ, դերասան Վաչիկ Վարդանեանը, որն ցարդ խոշոր ներդրում է ունեցել իրանահայ թատրոնի պատմութեան մէջ: Սոցն թատերգութիւնը եւս իր հեղինակութիւններէն էր: Նիւթը առնչուած էր վերջին 2 տասնեակ տարիներին իրանահայութեան արտագաղթին, որն շարունակուած է մինչեւ այսօր: Սրահը լեցուն էր ծայրէ ի ծայր: Սքանչելի խաղարկութեամբ հան-

դէս եկան շնորհալի դերասաններ՝ Նազար Ղազարեանը եւ Նարինէ Մելիքեանը, իսկ միւս դերակատարները յաջողեցին իրենց հարազատ կերպարները ցուցադրելով: Վաստակաւոր դերասան Արշակիր Ղարիբեանը շատ յաջող էր հոգեբանի դերով: Գնահատելի է բեմադրիչ Վաչիկ Վարդանեանը, որն այս դժուարին պայմաններում յաջողել էր քսանից աւելի դերակատարներ բեմ հանել, անշուշտ ամիսներ փորձերից եւ տքնաշան աշխատանքներից յետոյ սոցն ներկայացումը բեմադրել, որն կրկնուելու է Կիրակի Սեպտեմբեր 25ին: Ն. ՏԻՐԵԱՆ

Զմեյտրայիս

ԽՐԱԽՈՒՆԵՆՔ

եւ

ՉՈՒԿԿԵՐՈՅԹ

Կազմակերպութեամբ՝
ԿԼԵՆՏԵՅԼԻ ԱՐՄԷՆ ԿԻՏՈՒՐ
ՄԱՍՆԱԺԻՂԻ

Շաբաթ, 1 ՆՈՎՏԵՄԲԵՐ 2011
երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91104



Տոմսերու համար դիմել՝ (626) 797-7680
ՄՈՒՏՔԻ ՆՈՒԷՐ՝ \$20.00

ՈՒԶՈՒՄ ԵՄ ՊԱՏՄԵԼ ՎԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

ԱԼԻՍ ԴՈՒՐԵԱՆ

Այս գրութեամբ, ճիշտ իր ծննդեան օրը՝ Սեպտեմբերի 8-ին, կատարում եմ սիրելի ամուսնուս՝ Օհան Դուրեանի ինդրանքն ու ցանկութիւնը՝ մեր հոգու եւ սրտի խօսքը, զգացումները հրապարակալայտնել նուիրեալ ու պաշտելի անձնաւորութեան՝ Վահան Վարդապետեանի մասին:

Ամէն անգամ, երբ մաեստրոն ցանկանում էր խօսել Վահանի բացառիկ նուիրութեան ու զոհողութիւնների մասին, նա խուսափում էր եւ ինդրում չբարձրաձայնել: Մակայն ծանր հիւանդութեան օրերին, ուժերի գերլարումով Օհանն իր սրտի խօսքը, օրհնութիւնն ու մաղթանքները գրեց, ինչպէս ինքն էր ասում, իր «հոգու գաւակ», անսիրտարինելի Վահան Վարդապետեանին:

Վահանի նման նուիրեալ երկրպագու ունենալը ամենամեծ երջանկութիւնն է արուեստագէտի համար: Նա Աստուծոյ պարգեն էր մաեստրոյի համար՝ իր հանձարի, երաժշտութեանն իր անմնացորդ նուիրումի դիմաց: Այն, որ Վահան Վարդապետեանը հրաշալի բժիշկ, փայլուն հրապարակախօս, խիզախ ու սկզբունքային մտաւորական է, յայտնի է բոլորին: Քանի արժանաւոր մտաւորականի-արուեստագէտի է ձեռք մեկնել ու օժանդակել, հոգեպէս աջակցել, իսկ այն ամէնը, ինչ արել է մաեստրոյի արուեստի համար, աննկարագրելի ու անբեւեակայելի

է՝ չինայելով ոչինչ՝ ոչ իր ժամանակը, ոչ իր առողջութիւնը, ոչ իր կարողութիւնը:

Հայրենիքում մեր ամենաթանկագին ձեռքերումը համարել ենք ժողովրդի սէրը, եւ առաջին հերթին Վահանի պէս ազնուագոյն, արուեստապաշտ անհատականութեան հետ մեր բարեկամութիւնը: Ամենանեղ օրերին, յուսահատութեան պահերին, վշտացած ժամանակ, միշտ ու միշտ, նա եղել է մաեստրոյի կողքին: Ժողովրդի ու նաեւ Վահանի հանդէպ սէրն է մեզ պահել հայրենիքում՝ յաղթահարելով ամէն դժուարութիւն, վիրաւորանք եւ անգամ իշխանութեան ոճրագործ արարքները: Իր խելացի, նրբանկատ խորհուրդներով նա եղել է մաեստրոյի խորհրդատուն, մաեստրոյի անձի ու արուեստի անմնացորդ ու խիզախ պաշտպանը մշակոյթի տհաս ու անճաշակ դեկավարներին:

Ի պաշտպանութիւն Օհան Դուրեանի արուեստի, Վահանը ամենասկզբունքային ու բարձրարժէք յօդուածների հեղինակն է: Մաեստրոյի մոսկովեան համերգների նախաձեռնողն ու կազմակերպիչներից մէկը դարձեալ Վահան Վարդապետեանն էր, բոլոր համերգների, փորձերի, հիւրախաղերի ժամանակ մշտական հոգատար ուղեկցողը... Որքան դաժան ու անարդարացի վերաբերմունքի արժանացաւ մաեստրոն, ինչ տառապանքներ ու վիրաւորանքներ կրեցինք, անգամ չիշելը շատ ծանր է: Միայն Վահանին էր

յաջողում հոգեպէս աջակցել մաեստրոյին, ցրել ու փարատել ծանր ապրումներից, ուժ տալ եւ ուրախացնել: Մաեստրոն եւ ես անվերապահօրէն վստահել, հաւատացել ու հաշուի ենք նստել Վահանի հետ, քանզի նրա անշահախնդիր նուիրումը, անկեղծութիւնն ու խիզախութիւնը միշտ հիացրել են մեզ: Ինձ եւ մաեստրոյի համար անսիրտարինելի անձ է նա: Մաեստրոյի համար Վահանը ամենահաս ու ամենակարող մէկն էր, ամէն ինչ ինդրում ու պահանջում էր իրենից, իսկ Վահանը անուժ էր, այն էլ սրբութեամբ, մաեստրոյի բոլոր ցանկութիւններն ու պահանջները, անգամ ամենադժուար ու անհարին: Չեմ կարող նկարագրել, թէ մաեստրոն որքան սէր, նուիրում, պաշտամունք եւ ինամք է վայելել Վահանի կողմից:

Մինչեւ Օհանի կեանքի վերջին վայրկեանը նա ծառայեց իր սիրելի մաեստրոյին: Վերջին տարիներին Օհանը ուղղակի դողում էր Վահանի վրայ եւ դուրս գալիս խաչակնքում ու աղօթում՝ «Աստուած քեզ պահպան», «Վահանին պէս մարդիկ են պէտք Հայաստանը վեր հանելու», միշտ ասում էր մաեստրոն: Ոճրագործ իշխանութիւնը գրկեց մաեստրոյին հայրենիքում աշխատելուց, երաժշտութիւնից կտրուելն ու չաշխատելը մահ էր Օհան Դուրեան արուեստագէտի համար: Վահան Վարդապետեանի հսկայական ջանքերի շնորհիւ կազմակերպուեցին Օհանի մոսկովեան համերգները, որոնք ուղղակի ցնցեցին ուռւակաւ երաժշտական աշխարհը: Ու քանի տասնեակ

անգամ Վահանը մեկնեց Մոսկուա... Մաեստրոն փափաքում էր իր երաժշտական արխիւը ստեղծել, որի համար բաւականին մեծ գումար էր անհրաժեշտ: Վահանն իր կարողութիւնը չինայեց, եւ իր շնորհիւ Օհանի երաժշտական ժառանգութիւնը մնաց սերունդներին, ինչը պարտաւոր էր անել կառավարութիւնը: Վահան Վարդապետեանի շնորհիւ մաեստրոն որեւէ ֆինանսական ու կենցաղային դժուարութիւն չունեցաւ: Օհանի ծանր հիւանդութեան ժամանակ որքան անքուն գիշերներ անցկացրինք Վահանի հետ:

Վահանը նաեւ ինձ ուժ տուեց՝ նուիրուելու մաեստրոյի բուժմանն ու ինամքին: Ես ողջ կեանքում պարտական եմ Վահանին: Հիւանդանոցային բուժման ու ապաքինման հսկայական ծախսերը տրուեցին Վահան Վարդապետեանի օգնութեամբ, ինչը պարտաւոր էր կառավարութիւնն անել: Վահան Վարդապետեանն իր կողմից արուած հսկայական ծախսերը փոխհատուցելուց հրաժարուեց, ինչը մեզ հնարաւորութիւն տուեց իրականացնել Օհանի ցանկութիւնը: Եւ մեծ սիրով ու պարտաւորումով՝ ես յաշտարարում եմ, որ ամէն ինչ անելու եմ, որ ժողովուրդն ունենայ իր սիրելի մեծ արուեստագէտ Օհան Դուրեանի ստեղծութիւնը: Վահան Վարդապետեանի վեհանքնութիւնը, նուիրուածութիւնը արուեստի եւ մեծերի հանդէպ թող օրինակ ծառայի: Միւրելի Վահան, մաեստրոյի պաշտելի Վահան, թող Օհանի սուրբ օրհնութիւնը միշտ վրադ լինի:

"Քաջ Նապար" հանդէսը եւ հեռուստաժամը Ներկայացնում է

12-րդ ամեակի ԹԵԼԵԹՈՆ

Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳԻ ԲԻՄՆԱԳՐԱՄԻ, ԲԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ԲԱՇՄԱՆՂԱՍ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՅ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒԹԵԱՆ ԲԱՄԱՐ (ԲԻՄՆԼԱԾ 1999թ.)

Կիրակի, հոկտեմբեր 9, 2011
երեկոեան ժամ 5-11-ը


ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.
FOR DISABLED CHILDREN AND FOR THE RESTORATION OF CHILDREN'S HOMES
Sponsored by "KACH NAZAR" Magazine & TV Show

12 ANNIVERSARY

NATIONWIDE TELETHON

ON SUNDAY OCTOBER 9, 2011
5pm-11pm

www.forourkids99.com / e-mail: forourkids99@gmail.com
(818) 239-6880 • (818) 246-0125 • (818) 606-2070 • (818) 246-2070
Non-profit organization a tax-exempt 501(c) 3 charity ID #27-1381531

Ո՞Վ ՎԱՌԵՑ ԻԶՄԻՐԸ

Քեմալի բանակին իզմիր մտնելէն-Սեպտեմբեր 9, Շաբաթ կէսօր- ժամ մը վերջ հնչեց անազանգը. հայոց թաղը վտանգուած էր: Թուրք խուժանը բաժնուած 5-6 հոգինոց բազմաթիւ խմբակներու, գինուած պատերազմական գէնքերով, փողոցները կը շրջէր: Հայեր իրենց տուները քաշուած ու դուռերնին փակած էին: Խուժանը բռնութեամբ կը բանար կարգ մը տուններ, տնեցիները կը խոշտանգէր եւ կը ստիպէր հանել եւ իրենց յանձնել պահուած դրամներ ու զարդեղէններ:

Հայոց թաղին բոլոր անկիւնները հետզհետէ զբաւեցնող նախկին ոստիկաններէ եւ Քեմալի զինուորներէ կազմուած հրոսակախումբերով: Փողոց ելնող կամ տուն դարձող թաղեցիներուն ազգութիւնը ստուգելէ յետոյ անոնք հրեաները ազատ կ'արձակէին, իսկ քրիստոնէաները, մանաւանդ հայերը, կը կողոպտէին եւ չարաչար կը ծեծէին:

Այդ գիշեր ծայրամասերու յոյն թաղերը Աբանօ մահալլա, այս վուզլա, Այիոս Քոսթանթինոս եւ մանաւանդ հայաբնակ թաղերը՝ Հայոց Քարաթաշ, Քորտելիօ, նշաւակ եղան թրքական վայրագութեանց եւ այդ թաղերուն մէջ սկսաւ շարքը քեմալական անլուր եւ աննախընթաց խժոժութիւններուն: Տունները կը թալանուէին ու գոյքերը կը տարուէին թուրքերու տունները, թուրք կիներ եւ սղաքներ մեծ դեր կը կատարէին աւարը կրելու գործին մէջ, իսկ թուրք այր մարդիկ զբաղած էին հայեր երեւան հանելու եւ զանոնք տեղնուտեղը սպաննելու եւ կամ տուներէն հեռացնելով անհետացնելով գալթերով: Վերոյիշեալ թաղերու մէջ բնակող շատ մը զեղեցիկ տիկիներ եւ օրիորդներ կ'առեւանգուէին եւ առարկայ կ'ըլլային թուրք խուժանին եւ Քեմալի կիսավայրենի զինուորին խենչ տալիս: Տիկիներէն եւ օրիորդներէն ոմանք քուլեցան հարեմները, ուրիշներ փողոց ձգուեցան, քալելու անկարող վիճակի մէջ:

Սեպտեմբերի 10, Կիրակի առտու, հրեայ մունետիկներ եկան հայոց թաղը եւ հոն բնակող իրենց ազգակիցներուն ազդարարեցին, թէ Հայոց թաղը վտանգուած է, եւ թեւադրեցին թողուլ իրենց տուները եւ երթալ Հրէից թաղը: Կիրակի մինչեւ կէսօր Հայոցի բոլոր հրեաները գացին հեռաւոր թաղեր: Նոյն օրը կէսօրէն յետոյ մեծ թափով յառաջ տարուեցան Չարդը, թալանը եւ առեւանգուումները. կէսօրէն վերջ ժամը 3ին հրդեհ ծագեցաւ Հայոցի ծայրը գտնուող տունէ մը, հրէջ խումբը, որուն կ'ընկերանային անգլիացի նաւագներ, եկաւ մարեց հրդեհը:

Կիրակի մինչեւ առտու տեղող խժոժութիւններն ու վայրագութիւնները անարգել շարունակուեցան Սեպտեմբեր 11, Երկուշաբթի օր եւս: Հայոց գոյքերն օր ցերեկով սայլերով ու բեռնակիրներով տեղափոխուեցան:

Երկուշաբթի կէս գիշերէն յետոյ ժամը 2ին առջի օրուան հրդեհը կրկնուեցաւ: Հրէջ խումբը փութաց ու մարեց կրակը:

Սեպտեմբեր 12, Երեքշաբթի Հայոց թաղի բոլոր տունները թալանուած ու դատարկուած էին - այդ տուններէն մեծ մասին իւրաքանչիւրին մէջ 1-4 դիակներ կը մնային: Դժոխային այդ վիճակին ենթարկուած էին նաեւ Քարաթա-

շի եւ Քորտելիօյի հայ տունները, ինչպէս նաեւ ծայրամասերու յոյն տունները: Զարդարարները յաճախ զարկած էին բոլոր տնեցիները անխտիր՝ այր ու կին, ծեր, պառաւ ու մանուկ:

Խուժանն ու զինուորը իրենց ապերասան ընթացքին մէջ չէին զանազանք օտարականները: Շատ մը օտարներ մոլեգնօրէն խոշտանգուեցան ու կողոպտուեցան, թուրքեր Ամերիկեան Ինթըրնէշնըլ քօլեճի տնօրէն միսթր Մաքսաուլիընը կողոպտելէ ու անխնայ ծեծելէ վերջ կը պատրաստուէին հրացանի բռնել գինք: Ծանօթ սպայ մը վրայ կը հասնի եւ ստոգ մահէ կ'ազատէ զայն:

Աղէտի առաջին օրերը իրենց տուններէն հեռացած մեծ թիւով քրիստոնէաներէն ոմանք փողոցներուն մէջ սպաննուեցան, ուրիշներ պահականոցներու մէջ հաւաքուելէ յետոյ խումբ-խումբ յանձնուեցան թուրք խուժանին, գոհացում տալու համար անոր արիւնախանձ կիրքերուն, ոմանք առաջնորդուե-



ցան զօրանոց, ուր անոնց վրայ կտարուած են ոճրագործութիւններ: Այսպէս զինուորականներու աչքին առջեւ, թուրքեր քրիստոնէաները նստեցուցած են կարգով շարուած աթոռներու վրայ եւ մէկ հարուածով գլուխները մարմիններէն զատել փորձած են: Ուրիշ քրիստոնէաներ ծոծրակէն կամ կողորդէն դաշունահարելով գալաւորները դիտած են դիւային հրճուանքով: Բազմաթիւ քահանաներու մօրուքները բռնկեցուցած են բենգինով:

Զօրանոցի ծովեզերեայ պառաքներէն մին լեցուած էր դիակներով: Իրարու վրայ կուտակուած զարշահոտ այդ մարմինները դիակի սայլերու մէջ զետեղուեցան Սեպտեմբեր 22ին միայն, նոր ձերբակալուած քրիստոնէաներու ձեռքով:

ՅԱԿՈՒ ՏԷՐԵՆՅԸ 1924 Նոյեմբերին ուրիշ վկաներու հետ իր այս տեղեկագրով ներկայացաւ Լոնտոնի մէջ կայացած դատավարու-

Շաբ.բ էջ 19



CHRIS HOLDEN

FOR State Assembly



ՀԱՆՐԱՅԻՆ ՀՐԱՒԵՐ

Կազմակերպութեամբ Փասատիկնայի Հայ Համայնքի Խորհուրդին

www.acc-us.org

Հինգշաբթի, Սեպտեմբեր 29, 2011 - Երեկոյան ժամը 6.30-ին

Սիրով կը հրաւիրուին Փասատիկնայի համայն հայ հասարակութիւնը եւ հայկական բոլոր կազմակերպութիւններն ու միութիւնները:

ՄԱՍՆԱԿՑԵՅԻՔ ԶԵՐ ԳԱՂԱՔԻ ԲԱՐԵԼԱԽԱՆ ՀԱՒԱՔՈՅԹԻՆ

ԵԿԵՔ ԶԵՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՒ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՓՈԽԱՆՑԵՅԻՔ ՔՐԻՍ ՀՈՒՏԵՆԻ

For more information Call (626) 398-4520
 e-mails: info@acc-us.org • cchahinian@acc-us.org
 Տեղի պիտի ունենայ Պէօշկէթ-ուրեան Սրահին մէջ
 1901 Allen Avenue, Altadena CA 91001
 Հիրաւիրութիւնը պիտի հրամցուի **GORFU RESTAURANT**-ի կողմէ

ԱԿԱՆԱԻՈՐ ԳՐՈՂԻ ՍՊԱՍՈՒԱԾ ՆԱՍԱԿԱՆԻՆ

ԳԱՌՆԻԿ ԾԱԽԿԵԱՆ

Թւում է, թէ կատարելապէս ճանաչում ենք ականաւոր գրող Ստեփան Զօրեանին, որ հարստացրել է հայ գրականութեան անդատանը բազմաթիւ, մէկը միւսից արժէքաւոր եւ բարձրարուեստ ստեղծագործութիւններով:

Բայց ծանօթացէք վերջերս լոյս տեսած նրա «Սրտի մտօք եւ յարգանք» կոչուող նամակների ժողովածուին (Երեւան, 2010), եւ ձեր առջեւ կը բացուեն նրա մարդկային ու գրողական կերպարը լրացնող, հարստացնող հազուագիւտ եւ անսպասելի շատ փաստեր ու իրողութիւններ:

Հարուստ է նամակներին՝ բազմաբնոյթ բովանդակութեամբ եւ բազում հասցեատէրերով, քանզի բազմակողմ ու լայնեզր են գրողի ստեղծագործական արարումների շրջանակները: Հրատարակուած նամակների թիւն անցնում է 260-ից, որը, ինչպէս նշում է, «գրողի էպիստոլիար ժառանգութեան գուցէ միայն կէսն է»: Ստ. Զօրեանն ունեցել է շուրջ 140 հասցեատէր, որոնցից շատերը յայտնի չեն:

Առայժմ չեն գտնուած Աւ. Իսահակեանին, Դ. Դեմիրճեանին, Վ. Տէրեանին, Ե. Զարենցին ուղղուած նրա նամակները: Զօրեանը նամակներ է գրել ԽՍՀՄ եւ արտերկրի մի շարք գրողների, մշակույթի գործիչների, հրատարակիչների, սակայն դրանք ամենատարբեր պատճառներով մատչելի չեն դարձել նամակներին կազմողներին (Կարէն եւ Հռիփսիմէ Զօրեաններ): Նամակներին մեծագոյն մասով հրատարակուած է առաջին անգամ, միայն մի քանի անձանց ու մարմիններին յղուած նամակներ ու գրութիւններ են նախկինում հրատարակուել մամուլում եւ հեղինակի «Եռագոյն մի ճանապարհ» ժողովածուում (Երեւան, 2007): Ներկայացուած հասցեատէրերը, ինչպէս եւ սպասելի է, գրահրատարակիչներ են, թարգմանիչներ, խմբագիրներ, գրողներ, պետական, մշակութային գործիչներ, բարեկամներ, ընտանիքի անդամներ, նաեւ խմբագրութիւններ:

Մեծաթիւ են հրապարակախօս, հասարակական գործիչ Դաւիթ Անանունին, գրող, հրատարակիչ Միսաք էփրիկեանին, թարգմանիչ, հասարակական գործիչ Կարէն Միքայէլեանին, թարգմանիչ, խմբագիր Յակոբ Խաչատրեանցին, գրականագէտ, թարգմանիչ Սազո Սուքիասլանին, դերասան, գրող Պահարէին, Ստ. Զօրեանի տիկնոջը՝ Սաթենիկ Զօրեանին գրած նամակները: Դրանցում արծարծումները առաւելապէս վերաբերում են ուրիշներին՝ յատկապէս երիտասարդ ստեղծագործողներին, նրանց գրական, հրատարակչական, թարգմանական եւ այլ խնդիրներին: Զօրեանն իր միջնորդութիւններով, խորհուրդներով, խնդրագրերով փորձում է բարոյական, ստեղծագործական, նիւթական եւ այլ աջակցութիւն ցոյց տալ կրտսեր գործընկերներին (Գուրգէն Բաղդասարեան, Համօ Սահեան, Սերգօ Պայազատ, Քրիստափոր Թափալցեան, Արաքս, Մարգար Դաւթեան եւ ուրիշներ): Գրքի «Բան ի հարկէ» ներածական խօսքից երեւում է, որ Ստ. Զօրեանը, որպէս ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի պատգամաւոր, դիմել է նաեւ ԽՍՀՄ



քիմիական արդիւնաբերութեան նախարար Լէոնիդ Կոստանդովին՝ Ալավերդու եւ Կիրովականի (Վանաձոր) տարածաշրջանի բնապահպանական խնդիրների լուծման մտահոգութեամբ:

Հրատարակչութիւններին եւ հրատարակիչներին ուղղուած նամակներից երեւում է, թէ որքան պահանջկոտ էր գրողն իր ստեղծագործութիւնների որակի նկատմամբ. «Խնդրում եմ յարգելի խմբագրութեանդ, որ իմ «Բարերարուհի» պատմուածքը չտպէք... Իզուր տպել էք «Հարուստի մայրը» պատմուածքը, որովհետեւ դա թոյլ բան է», «Կամուրջ» այլեւս չեմ ուզում տպուի. շատ է անմշակ», «Խնդրում եմ իմ յօդուածը չկրճատել, որովհետեւ գրուած է ծայրահեղ սեղմ ձեւով: Եթէ որեւէ բան կրճատուի - խնդրում եմ չտպէք»:

Նամակներից երեւում է Զօրեանի աշխույժ, պատկերաւոր, հուժկո, ժողովրդական բառուբանով համեմուած խօսքը, լուռեցիական ակտիւ կենսակերպը, ազնիւ նկարագիրը: Գրող, լրագրող Արշակ Վարդանեանին այսպէս է յայտնում իրադրութիւնը. «Քո «Լեռնային արծիւները» Պետհրատից սաւառնել են արդէն «Սովետական գրող» հրատարակչութիւնը եւ նոր բուն են դրել այնտեղ», կամ՝ Վահան Թոթովենցին. «Լսեցի, որ Բալզակի ախորժակ ունես եւ բալզակեան ցանկութիւններ»: Կատակով «հիմնաւորում է» ամառային հանգստից յետոյ Ստեփանավանից Երեւան վերադառնալը. «Շտապում ենք, որովհետեւ... միւս կողմից՝ այստեղի կանայք երբ իրենց երեխաներին անիծում են, ասում են. «Գրողը քեզ տանի», «Գրողն երեսդ», «Գրո՞ղ... Շտապում եմ, քանի այստեղի երեխաներն ինձ չեն ճանաչել...»:

Կարեւոր են մի խումբ գրողների եւ նրանց ստեղծագործութիւնների վերաբերեալ Զօրեանի բնութագրումներն ու կարծիքները. «Գորկին ժպիտ գրեթէ չունի: Հասակի համեմատ առոյգ էր եւ կայտառ», «Դուր է գալիս ինձ, մանաւանդ, Գեղամ Սարեանի գիրքը: Գրում է սրտով, անկեղծ եւ ընթերցողին վարակում իր տրամադրութեամբ», «Մեծ գրողների փշրանքները նոյնքան հետաքրքրական են, որքան եւ աւերակ դարձած հոյակապ տաճարների բեկորները: Ինչպէս, ասենք, «Չուրիկը»», «Ելի կեցցէ Թումանեանը. մեր երկու ինքնուրույն օպերայի նիւթերն էլ նրանն են: Իզուր չէր, որ նա միշտ ասում էր, թէ «ես դրամատուրգ եմ», «Ուրախ եմ առանձնապէս, որ Թումանեանի,

Աղբալեանի եւ Նար-Դոսի ամբողջական գործերը պիտի հրատարակեք առաջին հերթին...»

Առանց չափազանցնելու կարող եմ ասել, որ Թումանեանը մեր առաջին արձակագիրն է հայկական ոգով... Ինձ թւում է՝ Լ. Շանթի գրուածքը կարելի է բոլորից առաջ գցել, որովհետեւ սա բոլորովին նոր գրական գործ է», «Մեր պոեզիայում Յովհաննես Յովհաննիսեանը կազմում է դարաշրջան», «Սքանչելի է Վահան Տէրեանի «Գագելը», Վրթանէս Փափագեանի լեզուն անտանելի է», «Թէ զեկուցողը եւ թէ խօսողների մեծ մասը այդ վէպը համարեցին միանգամայն անյաջող, շինծու եւ սարքովի գործ: Եւ, իմ կարծիքով, իրաւացի էին» (Վահան Թոթովենցի «Բագու» վէպի մասին):

Կարեւորում է Յովհ. Թումանեանի երկերի բարձրորակ հրատարակումը եւ ուրախութեամբ տեղեկացնում Նուարդ Թումանեանին.

«Զարեանը այն միտքը յայտնեց, թէ «Լաւ կը լինի «Քառեկները» հրատարակելը մի գրքով, լաւ թղթի վրայ, պատկերազարդ»: Պետհրատի հնարաւորութեան մասին խօսք չի կարող լինել նա յամենայն դէպս Թումանեանի համար հնարաւորութիւն կ'ունենայ»:

Ստ. Զօրեանը յաճախ է ոգեւորել եւ բարեմաղթանքներ յղել իր կրտսեր բարեկամներից շատերին. «Ուրախութեամբ կարդում ենք քո սեղմ ու բովանդակալից յօդուածները: Շարունակիր, այնքան լաւ, կիրթ հայերէնով ես գրում, հաճոյք է կարդալը» (Կարէն Միքայէլեանին), «Փորձեցէք անվախ եւ համարձակ... Աշխատէք խուսափել մի քանի սեթեւեթ ձեւերից եւ փորձեցէք մշակել աւելի ակտուալ թեմաներ» (Սերգօ Պայազատին), «Զիլ կայ եւ սիրտդ մի կտորի: Դու միշտ կենսուրախ ես եղել, այդպէս էլ կայ, գառ՛ ջան» (Պահարէին): Զօրեանը բերկրանք է ապրում, երբ օգտակար է լինում մարդկանց, կարողանում է կատարել նրանց խնդրանքներն ու ցանկութիւնները: Եւ հակառակը՝ բարդ կացութիւն է ապրում, երբ չի լուծուած որեւէ մէկի խնդիրքը. «Մի քանի օր ես տատանման մէջ էի, թէ ինչպէս յայտնեմ այն, ինչ պիտի գրեմ: Բանն այն է, որ ես սիրում եմ մարդկանց բարի լուրեր յայտնել միայն, ուրախացնել եւ ոչ թէ տխրութեան պատճառ դառնալ»:

Զօրեանը դժգոհում է քննադատ Վիկտոր Գոլցեւից, որը պահանջում է՝ «Սպիտակ քաղաքը» վէպում քաղաքը դարձնել հիմնական թեմա, նաեւ գտնում է, որ Գոլցեւը պիտի վերցնէր եղածը. յաջող է, թէ՛ անյաջող: Թէ՛ չէ պահանջել, որ այս լինէր ու այն լաւ կը լինէր, դա ինձ չիշեցնում է Աւ. Իսահակեանի մի պատմութիւնը, թէ եթէ հօրաքոյրս այս բանն ունենար հօրեղբայր կը լինէր»:

Քննադատներ Նիկոլ Աղբալեանը, Խորէն Սարգսեանը կարծում են, որ Ստ. Զօրեանի պատմուածքներում նկատելի է Ա. Չեխովի եւ Յովհ. Թումանեանի ազդեցութիւնը:

Այդ կապակցութեամբ Պաքուի «Խորհրդային գրող» ամսագրի խմբագիր Գարեգին Սեւեռնցին Զօրեանը գրում է. «Ճիշտն ասած՝ ես Չեխովին էլ եմ սիրում, Թումանեանին էլ, շատ ուրիշներին էլ, բայց երբեք գիտակցաբար չեմ ուզեցել նմանուել մէկին կամ միւսին:

Եթէ մի քանի բան, ասենք, յիշեցնում են Թումանեանին դա

աւելի շատ նրանից է, գուցէ, որ միեւնոյն գաւառից ենք, եւ հայրենակիցները, ինչպէս գիտես, ակցենտի նմանութիւն ունեն: Միայն ակցենտի, ինչպիսի նմանութիւն կայ Թումանեանի եւ Աղայեանի միջեւ: Թէ՛ չէ նրա եւ իմ նիւթերը եւ դրանց մշակութիւնները, ինձ թւում է, շատ են տարբեր... Ոգու հարազատութիւն կարող է լինել, բայց փաստարկումը ճիշտ չէ: Ոգու հարազատութիւն լինում է ամերիկացի եւ ռուս գրողի մէջ էլ»:

Ուշագրաւ է Ստ. Զօրեանի կարծիքը ծիծաղի դերի վերաբերեալ, որի մասին գրում է կատակերգու դերասան Պահարէին: Խրախուսելով նրա կատարածը, գրողն ասում է. «Մի՞թէ քիչ բան է հասարակութիւնը պահել գուարթ տրամադրութեան մէջ, թէ կուզ ժամանակ առ ժամանակ մոռացնել տալ նրան իր հոգսերը, ուրախացնել, ծիծաղեցնել: Ծիծաղի դերը մենք՝ հայերս, քիչ ենք գնահատում»:

Բայց դա մեծ գործօն է կեանքում, օգտակար դեզինֆեկցիա, որը որքան շատ լինի, այնքան աւելի լաւ»: Յիշո՞ւմ էք Միքայէլ Մանուէլեանի «Մաղորածուն» նովելը, որտեղ հոգեբան-բժշկի այցելուին դժգոհում է իր հոգեկան վիճակից, անքնութիւնից, մղձաւանջային տեսիլներից: Բժիշկը խորհուրդ է տալիս ապրել աւելի հանգիստ կեանքով, յանձնուել ժամանցի, այդ թւում այցելել կրկես, ունկնդրել այնտեղ հանդէս եկող ծաղրածուին, որը կարող է հանգստացնել ջղերը, ակտիւացնել կեանքի ուժը: Բայց ամէն ինչ հանգում է անսպասելի վերջաբանի, երբ այցելուին խոստովանում է, որ ծաղրածուն ինքն է»:

Շատ բան է ասում Զօրեանի վերաբերմունքը ՀԽՍՀ լուստողկոմ Պօղոս Մակինցեանի առաջարկութեանը, որ գրողն աշխատի էջմիածնի Գիտական ինստիտուտում. ինչ սէր ու նուիրում հայրենի բնաշխարհի հանդէպ, որ դրսեւորում է էջմիածնում ծառայող Դաւիթ Անանունին գրած նամակում. «Արժէ՞, արդեօք, թողնել Գուգարաց աշխարհի գովը, նրա սքանչելիքները առհասարակ՝ սարերից իջնող ջրերը, խշշան անտառները, ու զալ կիզուել Արարատեան երկրի տապում... Աշխարհական-վանական դառնալու հեռանկարը անժպիտ է»:

Այն խնդիրները, որ յայտն էլ կան (եւ, երեւի թէ, դեռ երկար կը լինեն) հեղինակների, հրատարակիչների առջեւ, գալիս են հնից. «Յ. Թումանեանին տես եւ ասա, որ այդ փողից մի գումար տա աշխատակիցներին հոնորար տալու, աւելի շուտ՝ բաժանելու...», «Առայժմ չմոռանա՞մ ասել, որ Լէոն ծանր դրութեան մէջ է: Հայոց պատմութեան» մնացած օրինակները առաջարկել է՝ չեն գնել: Խնդրել է օգնութիւն, չեն տուել», «Ապրում ենք մի կերպ ցրտին քացի տալով, ուրախ կը լինեմ, որ նամակներով դերմացնես», «Անտաղանդներն զբաղուած են ինտրիգներով, տաղանդաւորները՝ լուսութեամբ», «Առաւօտից-երկրոյ պայքարում եմ կեանքի ծանրութեան դէմ», «Մարդու յղացումները մեռնում են ուղղակի թարգմանութեան մէջ», «Յետոյ Հայաստանի մայրաքաղաքում այդ ի՞նչ վայրենի բարքեր են տիրում, օրը մի ինտելիգենտ են ծեծում, առանց ամաչելու, ա՛յն էլ, խմբագիրների»:

ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԻ ՎԵՐԱՄՈՒՏՈ



Մարտնակուած էջ 13-էն

Ժարանի արձանագրած յաջողութիւնները՝ դպրոցը երրորդ անգամ ըլլալով վարկաւորուեցաւ WASC-ի կողմէ 6 տարուան համար, եւ SAT standardized test-երուն մէջ ձեռք բերաւ բացառիկ յաջողութիւն: Ան շեշտեց ծնողք-դպրոց-աշակերտ գործակցութեան կարեւորութիւնը՝ գալիք սերունդներու մարդակերտման գործին մէջ: Տիկ. Արսլանեանը հպարտութեամբ նշեց որ այս տարի Մերտինեան Վարժարանը մեծ հանդիսութեամբ պիտի յիշատակէ իր հիմնադրութեան 30-րդ տարեդարձը: Իր խօսքի վերջաւորութեան, ան ծանօթացուց վարժարանի ուսուցչական կազմն ու պաշտօնէութիւնը, ապա վեր. Մաթոսեանի օրհնութեան աղօթ-

քէն ետք, Մաղիկէն մինչեւ Տրդ կարգերու աշակերտները, իրենց ուսուցիչներու առաջնորդութեամբ ուղղուեցան դէպի իրենց դասարանները՝ սկսելու համար 2011-2012 ուսումնական տարեշրջանի առաջին օրը: Նոյն օրը առաւօտեան ժամը 9:30ին տեղի ունեցաւ Մերտինեանի նախամանկապարտէզի վերամուտի հանդիսութիւնը ուր խօսք առին պատասխանատու Տիկ. Մակի Թօփալեանը եւ տնօրէնուհի Տիկ. Լինա Արսլանեանը, ապա ծնողները եւ «կակող թաթիկ» աշակերտները, իրենց ուսուցչուհիներով գացին նախամանկապարտէզի դասարանները՝ ծանօթանալու իրենց նոր տան եւ ընկերներուն, ապա մեկնեցան տուն: Յաջող երթ Մերտինեանին: Թղթակցութիւնը վարժարանէն

ՔՐԴԱԿԱՆ «ՆԱԽԱԶԵՌՆՈՂԱԿԱՆ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Մարտնակուած էջ 7-էն

տարբեր շրջանակների հետ երկուստեք շահակատ փոխառնչութիւնները: Քրդական հարցը մշտապէս հրեական քաղաքական շրջանակներում դիտարկուել է որպէս իսրայէլի տարածաշրջանային դիրքերի ամրապնդման կարեւոր գործօն, քանզի քրդական գիտնականները տարիներ շարունակ կլանել է իրանի, Թուրքիայի, Սիրիայի եւ Իրաքի ընդհանուր ներուժի զգալի մասը:

Քրդերի ազգային-ազատագրական պայքարը եւ իրաքում de jure անկախ պետութեան կազմաւորելուն միտուած քաղաքականութիւնն այժմ գտնուում են հանգուցային կարեւոր հերթական մի փուլում, որտեղ ցանկացած սխալ ռազմավարական քայլ կարող է հակառակ դրան հասցնել ողջ քրդական հարցին: Թուրքիայի հարաւարեւելեան նահանգներում, իրան-իրաքեան սահմանին, իրաքի Քիւրդիստանի տարածքում PKK-ի եւ Pjak-ի դէմ թրքական եւ իրանական բանակների ռազմական գործողութիւնները, Սիրիայում Ասադի վարչախմբի կողմից ընդդիմադիր զանգուածների դէմ գիտնութի կիրառումը, որտեղ իրենց չափաբաժինն ունեն դաշնութեան եւ անջատողականութեան կողմնակից քրդական շրջանակները, Իրաքում տարածքային խնդիրների եւ նաւթահանքերի պատկանելիութեան շուրջ արաբների, թուրքոմանների եւ քրդերի միջեւ վե-

ճերը՝ այս ամէնը քրդական հարցը դարձնում են շատ խոցելի:

Լիբերմանի ծրագրին քրդական քաղաքական շրջանակների կոշտ արձագանքը վկայում է, որ վերջիններս գիտակցում են լրացուցիչ այն վտանգները, որոնք կարող են գալ իսրայէլական շահերի գերին դառնալու դէպքում: Տուրք տալ թուրք-իսրայէլական ճգնաժամին եւ շարժուել «իսրայէլական դաշտում» թուրքերի հետ հակամարտութիւնը սրելու ճանապարհով՝ կը նշանակի ունենալ հեռանկարային մի նոր այնպիսի մարտահրաւէր, ինչպիսին կարող է դառնալ թուրք-արաբական հնարաւոր ռազմավարական գործակցութիւնը: Սակայն սա չի նշանակում, որ քրդական քաղաքական շրջանակները եւ, յատկապէս, իրաքի քրդական վերնախաւը իսրայէլա-քրդական գործակցութիւն ծաւլելու հեռանկարներ չեն տեսնում: Իսրայէլական առաջարկները լայն հնարաւորութիւններ են պարունակում քուրդ-հրեական յարաբերութիւնները ոչ բացառապէս գործացնելու համար: Առաւել եւս, որ նախորդ տարիների փորձը նման հնարաւորութիւններ ընձեռում է: Սպասելի է, որ հրապարակային կոշտ արձագանքներից զատ՝ հաւասարակշիռ լուռ գործակցութիւնը կը թեւակոխի մի նոր փուլ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՉՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ (ՌԱՀՀԿ) ՓՈՐՁԱԳԻՏ

ԱԿԱՆԱԻՐ ԳՐՈՂԻ ՄՊԱՍՈՒԱԾ ՆԱՄԱԿԱՆԻՆ

Մարտնակուած էջ 17-էն

Դեռեւս 1930-ականների վերջին Զօրեանն զգում է աշխարհի գլխին կախուած չարիքը, որ «պատերազմի հրդեհով նորից պիտի ողնչացուեն մարդկային հագարաւոր մատաղ կեանքեր ու դարաւոր կուլտուրական արժէքներ. նորից պիտի լուի ազնուացնող արուեստը, եւ նորից պիտի որոտան վայրենի թնդանթները, որոնք ստեղծել է դարձեալ մարդկային խելագարութիւնը՝ իրեն ողնչացնելու համար... Մարդկութեան կեանքում չկայ, իհարկէ, աւելի մեծ տրագեդիա, քան պատերազմը: Եւ այդ տրագեդիան կարծես անվերջ է. խաղաղութիւնները նրա դադարներն են, եւ ուրիշ ոչինչ» (գրում է Գարեգին Սեւունցին):

Մեծագոյն սէր ու գորով, բարձր գնահատանք ու խտացում է պարունակում Վահրամ Փափազեանին՝ ծննդեան 70-ամեակի առթիւ յղուած նամակը, որը շատ է ընդգրկուել, ջերմագին եւ մտերմիկ:

Զօրեանական նոյն շաւղջերմութեամբ ու գորովանքով է շնչում ճարտարապետութեան վարպետ Միքայէլ Մագմանեանի 60-ամեակի շնորհաւորանքը: Ամէն չափ ու սահմանից վեր է ընտանիքում թէ ընտանիքից հեռու գտնուող Զօրեանի ուշադրութիւնը եւ հոգատարութիւնն ընտանիքի անդամների, հարազատների հանդէպ: Տպաւորութիւնը հատորից

լրացնում են պատկերները, ընծայագրերը, գնահատականները, նշանաւոր նկարիչների գործերի, գրքերի ձեւաւորումների պատճենները (ափսոս, պատկերագրողութեան առաւել կատարելութեան կարիք ունի):

Ստեփան Զօրեանի նամակաւնու հետ ծանօթութիւնից եւս վառ դրսեւորում են նրա գործունէութեան եւ գրական ստեղծագործութիւնների դասական կատարելութիւնը եւ գեղարուեստական բարձր յատկանիշները: Դրանք հայրենի եւ համաշխարհային գրականութեան լաւագոյն աւանդութիւնների, նորարարութեան, արուեստի բարձր մակարդակի, հայոց լեզուի եւ հայոց պետականութեան ջատագովման, մարդկային հոգեբանութեան ճանաչողութեան նոր որակի, ժողովրդագրական խոր բովանդակութեան կրողներ են:

Նամակների ժողովածուն մեծ չափով ընդլայնում է հեղինակի գրողական եւ մարդկային գործունէութեան շրջանակի մեր իմացութիւնը:

Նամակների տողերից յառնում են հայոց ազգային ոգուն նրա ջերմագին կապը, հայրենասիրութիւնը, մարդամոտութիւնը, ընտանեակապաշտութիւնը: Այդ ամէնով էլ պայմանաւորուած է գրողի ստեղծագործութիւնների մեծ մասի արդիականութիւնը, դրանց կարեւորութիւնը այսօրուայ եւ վաղուայ սերունդների համար:

ՃՇՂՈՒՄ

Մեր նախորդ համարի (17 Սեպտեմբեր) էջ 7ի վրայ, կը խնդրուի Սահակ Թութեանի «11 Սեպտեմբեր 2001... եւ Յետոյ» յօդուածի երկրորդ պարբերութիւնը փոխարինել հետեւեալ սրբագրուած տարբերակով - Նիւ Եորքի մէջ Միջազգային Առեւտրական Կեդրոնի վրայ ճիհատիստ ինքնասպանական յարձակումը եւ երկնաքեր գոյգ աշտարակներու փլուզումը միայն մեզի հաղորդուած 2,977 անմեղ զոհերով չի վերջանար: Պրաուն Համալսարանի կողմէ չափաւոր ու «շատ պահպանողական» հաշիւներով իսկ, Իրաքի, Աֆղանիստանի եւ Փաքիստանի դէմ ԱՄՆ-ի շղթայագրեւած հակադարձ պատերազմներու մինչեւ հիմա հնձած զոհերն են մօտաւորապէս 6,000 ամերիկեան զինուորներ (առանց հաշուելու գործակցող միւս երկիրները), աւելի քան 137,000 անմեղ քաղաքացիներ եւ 7.8 միլիոն գաղթականներ այդ երկիրներէն: Դարձեալ ըստ ամերիկեան պաշտօնական նկատուած աղբիւրներու, այս երեք պատերազմները ԱՄՆ-ին արժած են, համախառն վերջնական հաշուով (ներառեալ փոխառութեանց տոկոսներու վճարումն ու վեթերաններու խնամքը), մօտ 4 թրիլիոն (4,000,000,000,000) տոլար - այսինքն մեծով-պզտիկով ամէն մէկ ամերիկացի պարտական է՝ աւելի քան 12,800 տոլարի տուրք - կամ, այլ պատկերացմամբ, երկու երախաներու տէր գոյգ մը պարտի գալիք տարիներուն այս նպատակով ընտանեօք վճարել աւելի քան 50,000 տոլարի լաւելեալ եկամուտի տուրք մը (կոկիկ գումար՝ որ կընար, ըսենք, սեփական տան գնման որպէս կանխավճար օգտագործուի): Անշուշտ չ'ըսուի թէ ինչ եղած են պատերազմի ենթակայ այս երկիրներու եւ աշխարհի միւս երկիրներու կրած նիւթական ծանր վնասները: Զի յիշուի Նաեւ թէ ո'ւր գացած են թրիլիոններու խոշորագոյն պատառները: Հապափնչպէս կարելի է հաշուարկել այն մահացու հարուածը որ սարսեց ամբողջ աշխարհի ապահովութիւնը, ժողովուրդներու միջեւ բարեկամական յարաբերութիւնները, բարակ թելերէ կախ բարոյական կոչուած արժէքները, նորահաս սերունդներու յոյսերն ու երազները: Ընտրահակութիւն:

ՃՇՂՈՒՄ

«Մասիս» շաբաթաթերթի Սեպտեմբեր 17, 2011 համարի մէջ «Մասիս»ի ֆոնտին կատարած նուիրատուներու ցանկին մէջ դրուած վեր. Գառնիկ Հալլաճեանը կարդալ՝ Արժանապատիւ Տ. Գառնիկ Ա. Քհնյ. Հալլաճեան, վեր. Վրթանէս Գալաճեանը կարդալ Արժանապատիւ Տ. Վրթանէս Ա. Քհնյ. Գալաճեան, իսկ Սոնա Մաղրեանը կարդալ Սառա Մաղրեան:

ԱՄՈՒՄՆԱՅԵԱԼՔ ՊԵՐՃ ՏԷՓՈՅԵԱՆ ԸՆԴ ՇԻՂԱ ՍԱՄԱՆԻ Ս. Պաակի արարողութիւնը տեղի ունեցաւ Զորեքշաբթի, 14 Սեպտեմբեր, 2011ին, Salt Lake City Utah-ի մէջ: Այս ուրախ առիթով մեր շնորհաւորութիւնները կը յայտնենք ամուսնացեալ գոյգին եւ անոնց ընտանեկան բոլոր պարագաներուն, ի մասնաւորի Տէր եւ Տիկ. ընկ. Մանուկ Տէփոյեանին:

ՄԱՐԱԶԴ՝

ՎԵՀԱՆՈՒՇ ՆԱՍԱՆԵԱՆ
(Ծննդալ Գալենտերեան, 1924-2011, Իսկէնտէրուն)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մահը մեր սիրեցեալ մօր, մեծ մօր, քրոջ, հօրաքրոջ եւ մօրաքրոջ մահը, որն տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 14 Սեպտեմբեր 2011, առաւօտեան ժամը 9:30-ին իր բնակարանին մէջ՝ Կիպրոս շրջապատուած իր հարազատներով: Թաղման արարողութիւնը տեղի ունեցաւ Ուրբաթ 16 Սեպտեմբեր 2011, Կ.Ե. ժամը 3:30-ին Լիմասոլի Gospel Hall-ի մէջ, որմէ ետք հանգուցեալի մարմինը ամփոփուեցաւ Լիմասոլի հայոց գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝
- Զաւակը՝ Տէր եւ Տիկ. Լուսինը եւ Հռութի Նասանեան եւ զաւակունք (Կիպրոս)
- Դուստրը՝ Օրդ. Եւնիկէ Նասանեան (Կիպրոս)
- Զաւակը՝ Տէր եւ Տիկ. Սամուէլ եւ Վարդանուշ Նասանեան եւ Զաւակունք (Լոս Անճելոս)
- Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Անի Ակոբեան եւ Զաւակունք Թալար եւ Վարդան (Պէյրութ)
- Դուստրը՝ Վեր. եւ Տիկ. Գրիգոր եւ Դինա Կարապետեան եւ Զաւակունք՝ Դաւիթ, Մեղեղի, Յովնաթան, Սիրակ եւ Քարիսա (Թորոնթօ)
- Թոռները՝
- Տէր եւ Տիկ. Յովիկ եւ Աննա Նասանեան եւ զաւակը (Կիպրոս)
- Տիկ. Յասմիկ եւ օրդ. Քէզիա Գափէլ (Կիպրոս)
- Տէր եւ Տիկ. Պետրոս եւ Ռէպէլա Նասանեան եւ զաւակունք (Կիպրոս)
- Տիար Դանիէլ Նասանեան (Կիպրոս)
- Տէր եւ Տիկ. Հրակ եւ Նիլյա Նասանեան եւ զաւակը (Միացեալ Նահանգներ)
- Օրդ. Յուրիկ Նասանեան (Լոս Անճելոս)
- Եղբայրը՝ Արշակ Եղբայր Աւագ Սրկ. Գալենտերեան (Լիբանան)
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Պաղտասար եւ Լիտիա Գալենտերեան եւ զաւակունք (Աւստրալիա) եւ համայն Շնորհքեան, Ճիլեան, Ակոբեան, Կարապետեան, Գալենտերեան, Սէբիլեան, Գազանճեան, Պալեան, Թէլեան եւ Պազարեան ընտանիքներ:

ՅԱԼԱԿՑՈՒԹԻՒՆ

ԵՂԻՍԱԲէթ ՔՅՕՐՕՂԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Յարութ եւ Լուսին Պոյեմեան կը յայտնեն իրենց խորագգաց ցաւակցութիւնները համայն Քէօրօղեան ընտանիքին եւ պարագաներուն: Առ այդ \$100 տոլար կը նուիրեն «Մասիս»-ի ֆոնտին:

ՅԱՆՈՒՆ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՆՈՐ Է ՍԿՄՈՒՄ

Շարունակուած էջ 2-էն

հասունացել, գոնէ մէկ-երկու սերունդ պիտի փոխուի: Ախր ձեր խմբակցութիւնում ջահեղներ կան, որ խորհրդային տարիներին սեղանի տակով առանց պղպեղ էին անցնում, բա նրանք ինչո՞ւ չեն փոխուում, եւ ընդհանրապէս՝ ձեր փոխած սերունդն ի՞նչ պիտի լինի: Բայց ինչ-որ իմաստով այս մարդիկ, իհարկէ, իրաւացի են: Սեփական երկրի անկախութիւնը գնահատող եւ դրանով հպարտացող հասարակութիւնն այս իշխանութիւններին չէր հանդուրժի: Եթէ հանդուրժում է, ուրեմն խորհրդային մտածողութիւնն իսկապէս դեռ արմատախիլ չի արուել: Իսկ այդ մտածողութեան առանցքը սա էր. «Մէկ ա՛» ընտրութիւնները ձեւա-

կան են, ամէն ինչ վերեւներում ա որոշուում, եղունգ ունեն՝ գլուխը քորի, աւելի լաւ ա էթանք Ռուսաստան փող աշխատենք»: Սերժ Սարգսեանի գլխաւորած ՀՀ-ն ահա հենց այս մտածելակերպն է խորախուսում ու քարոզում եւ, ի դէպ, դա անում է նոյն Ռազմիկ Չոհրաբեանի ու միւսների միջոցով: Սրանք էլ առանձնապէս չեն դիմադրում. հազիւ յարմար գործ են ձարել: Իսկ իրականութիւնն այն է, որ այսօր՝ անկախութեան հռչակումից 20 տարի անց, հասարակութիւնը դեռ ստիպուած է պայքարել յանուն անկախութեան: Ու այս անգամ պայքարն աւելի դժուար է լինելու, որովհետեւ հակառակորդը «անից է»: Բայց ինչ արած. անկախութիւնը հեշտութեամբ չի տրուում:

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ 200-ԱՄԵԱՅ ՅՈՒԲԵԼԵԱՆԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 14-էն

վաստակը, հիացումով յայտնեց իր բարձր գնահատանքը այդ վաստակին:

Տիկին Նինա Սարգսեան երգեց «Տէր, կեցո՛ր Դու զՀայս»:

Չորրորդ բանախօսը՝ Դոկտ. Հէլմութ Պուշկաուզըն պիտի խօսէր Միխիթարեան վանքի ձեռագիրներու մասին, բայց այդ օր հիւանդանոց պաուկած ըլլալով՝ հանդիսավարը կարգաց անոր գրութեան ամփոփումը:

Տիկին Ալլա Բաղրամեան երգեց «Ախտասանքեր»:

Հինգերորդ բանախօսը՝ Դոկտ. Տիկին Պարպարա Տենչեր տուաւ Միխիթարեան տպարանի պատմականը՝ շատ հետաքրքիր, նոյնիսկ Միխիթարեան Հայրերուն անձանօթ մանրամասնութիւններով:

Տիկին Նինա Սարգսեան երգեց «Կիլիկիա»:

Վեցերորդ բանախօսը՝ Հ. Նարեկ Տատուրեան պատմեց այս առիթով կատարուած վանքի եւ եկեղեցւոյ նորոգութիւններու մասին՝ նկարներու ցուցցով: Վերջին չորս տարիներուն վանքի համալիրը ոչ միայն հիմնովին նորոգուեցաւ, այլ մանաւանդ Յուշարձաններու պահպանութեան պետական մարմնի հսկողութեան տակ՝ բոլորովին վերադարձաւ իր սկզբնական կառոցին: Մանաւանդ եկեղեցին ստացաւ բացառիկ գեղեցկութիւն՝ անձանաչելի դառնալով:

Վերջին բանախօսութեան վերջ՝ պատուելու համար վանքին մանաւանդ կերպով նուիրուած երեք անձեր՝ Դոկտ. Երուանդ Զարմանեան, Դոկտ. Ժան Ժաք Շիրիքեան եւ տիկին Անթուանէթ Ունանեան, աբբահայրը փոքր արարողութեամբ անոնց տուաւ Միխիթարեան երրորդ կարգի անդամակցութիւն:

Տիկին Ալլա Բաղրամեան եր-

գեց «Կարօտ»ը կամ «մարտիկի երգ»ը:

Ապա աբբահայր Հ. Պողոս Գոճանեան ըսաւ իր փակման խօսքը՝ շնորհակալութիւն յայտնելով բոլոր անոնց, որ իրնց ներկայութեամբ եւ մանաւանդ գործօն մասնակցութեամբ՝ հանդէսի յաջողութեան նպաստեցին:

Այնուհետեւ ներկաները հաւաքուեցան վանքի բակը, ուր ճոխ հիւրասիրութեամբ եւ բարձր տրամադրութեամբ տօնական մթնոլորտ վայելեցին մինչեւ ուշ երեկոյ:

Սեպտեմբեր 11-ին, կիրակի ժամը ճիշտ 11-ին սկսաւ հանդիսական սուրբ պատարագը վանքի եկեղեցւոյ մէջ: Ներկաները գրեթէ նախորդ օրուան հիւրերն էին: Պատարագեց Վիեննայի վանքին աբբահայրը՝ Հ. Պողոս Գոճանեան: Երգչախումբը մեծ յաջողութեամբ երգեց Եկմալեանի արական ձայնի համար պատրաստած եռաձայն պատարագը՝ ղեկավարութեամբ Տիկին Կարինէ Ժամկոչեան-Սիմոնեանի եւ երգհնչիւն ընկերակցութեամբ Տիկին Իլոնա Փեթէօչի: Օրուան պատշաճ տպաւորիչ քարոզը խօսեցաւ Վիեննայի թեմին ձեռնադրիչ եպիսկոպոս Հէլմութ Քրեցըլ, որ ծնած ըլլալով Միխիթարեան վանքի մօտ եւ դրոշմուած? Հայտնեան աբբահայրմէ, մանկութեան տարիներէն միշտ կապը պահած է վանքին հետ: Օտար հաւատացեալներէն շատեր, որ առաջին անգամ ըլլալով ներկայ եղած էին հայ ծէսով պատարագի, խորապէս տպաւորուած էին հայ ծէսի գեղեցկութեամբ: Պատարագէն վերջ ժողովուրդը նորէն հիւրասիրուեցաւ վանքի բակը, ուր երկար մնացին վայելելով նաեւ Սեպտեմբերի համար անսովոր գեղեցիկ օդը:

Թղթակցութիւն Վիեննայէն

Ո՛Վ ՎԱՌԵՑ ԻՉՄԻՐԸ

Շարունակուած էջ 16-էն

թեան: Դատը բացեր էր Չմիւսնիալի մէջ մասնաճիւղ ունեցող Ամերիկեան ծխախոտի ընկերութիւնը ընդդէմ Գարդիլըն ապահովագրական ընկերութեան: Տէրենցը վկայելու էր հրաւիրուած Գարդիլըն

ապահովագրական ընկերութեան կողմէ:

Յակոբ Տէրենցը միւս վկաներու հետ լոնտոնեան դատարանին առաջ հաստատեց, թէ իզմիրն այրողները թուրքերն էին եւ ոչ թէ հայերը, ինչպէս կը պնդէր թուրք կառավարութիւնը:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
 1060 North Allen Ave
 Pasadena, CA 91107
 Գրասենեակները վերանորոգուած
 եւ յարմար վարձքերով
 Դետաքքրրուողներէն հեռաձայնել՝
 (626) 398-0506

REQUEST FOR QUALIFICATIONS FOR A MASTER DEVELOPER FOR JORDAN DOWNS REDEVELOPMENT RFQ NO. 7556

The Housing Authority of the City of Los Angeles invites Statements of Qualifications from qualified for-profit or non-profit developers of affordable housing to act as the master developer and to partner with the Authority and City of Los Angeles for the redevelopment of the Jordan Downs public housing site in the Watts community of Los Angeles. copy of the RFQ may be obtained beginning September 7, 2011 via www.hacla.org/ps or call (213) 252-5405 or 252-1832. Submittals will be accepted until 2:00 P.M. (Pacific Time) by November 4, 2011.

9/15, 9/22/11
 CNS-2169690#
 MASSIS WEEKLY



Հ.Մ.Մ.ի 90 Ամեակի
Ճաշկերոյթ Պարահանդէս

մասնակցութեամբ՝ Պերճ Նազգաշեանի
 Տեղի կ'ունենայ Նոյեմբեր 26, 2011
 Deluxe Banquet Hall Burbank

Մանրամասնութիւնները շուտով

Mark your calendars

